«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՅԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության՝ գործատուների հետ համագործակցությունն ու դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 4

ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 14

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 18

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 20

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 20

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 23

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 30

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 39

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 44

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 49

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 53

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 57

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 60

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 65

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 72

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 73

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 73

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 75

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 78

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 80

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 81

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 82

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջն առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման փուլում: Քոլեջն երաժշտական կրթության ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակին համահունչ:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը նկատի է ունեցել, որ քոլեջի առաքելությունը կրթության և մշակութային զարգացման պետական ռազմավարության շրջանակներում արդյունավետ կրթական ծրագրերով միջին մասնագիտական կրթության ոլորտում որակյալ երաժշտական կրթության ապահովումն է, երաժշտական արվեստի համապատասխան որակավորմամբ մասնագետների ու մանկավարժական կադրերի պատրաստումը, ազգային հոգևոր և մշակութային արժեքների պահպանումը և տարածումը: Փորձագիտական խումբը նշում է, որ 2019-2024թթ. ՌԾ-ի նպատակների և խնդիրների սահմանման հիմքում դրված չեն նախորդ ռազմավարական շրջափուլի ամփոփված արդյունքները: Հետևաբար փորձագիտական խումբը լիահույս է, որ նոր ՌԾ-ի մշակման աշխատանքները կզուգորդվեն 2019-2024թթ. ՌԾ-ի գնահատմամբ և թիրախային խնդիրների ընդգծմամբ, քոլեջի կողմից սահմանված արդյունքների գնահատման ցուցիչները կդրվեն պլանավորումների հիմքում և կարտահայտեն քոլեջի ռազմավարական նպատակները:

Նշանակալի է, որ ներքին և արտաքին շահակիցների համար քոլեջի առաքելությունը, ՌԾ նպատակները և խնդիրները ընկալելի և ընդունելի են՝ կարևորելով քոլեջի դերը երաժշտական ոլորտի մասնագետների պատրաստման և համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով երաժշտական դպրոցները համալրելու հարցում: Նրանք ընդգծում են քոլեջի դերակատարումը շրջանավարտների՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում կրթությունը շարունակելու գործում: Քոլեջի կողմից սահմանված հաջողության չափանիշների շրջանակում ևս էական է, որ կրթական ծրագրերի վերջնարդյունքները հիմք լինեն կոնսերվատորիա ընդունվելու համար: Նշյալը մի կողմից դրական է անդրադառնում քոլեջի դրական վարկանիշի ձևավորման և կրթական ծրագրերի գրավչության բարձրացման վրա, մյուս կողմից էլ՝ երաժշտության ոլորտի աշխատաշուկայի արագ սպասարկման տեսանկյունից հարկավոր է, որ քոլեջի շրջանավարտները անմիջապես

աշխատանքի անցնեն երաժշտաարվեստի ոլորտի դպրոցներում ու կազմակերպություններում։ Փորձագիտական խմբի գնահատմամբ քոլեջն այս հարցի շրջանակում որոշակի աշխատանքների իրականացման կարիք ունի՝ կրթության վեկտորն ուղղելով ոլորտային հաստատությունների կարիքները բավարարող մասնագետների թողարկմանը։

Քոլեջին հաջողվել է ՌԾ-ով սահմանված նպատակներից իրագործել՝ տարբեր գործընթացների համար փաստաթղթային հենքի ձևավորում, նյութական ռեսուրսների որոշ բարելավումներ, արտաքին համագործակցությունների զարգացում։ Քոլեջին դեռևս չի հաջողվել ներգրավել ֆինանսական այլընտրանքային աղբյուրներ, ֆինանսական պլանավորումը համապատասխանեցնել ռազմավարական նպատակներին, ապահովել որակի ներքին գնահատման չափանիշներին և ինքնագնահատման գործընթացին վերաբերող վերլուծական հաշվետվությունների հրապարակայնությունն ու թափանցիկությունը, ձևավորել էլեկտրոնային գրադարան, տեղեկատվական տեխնոլոգիաները արդյունավետորեն կիրառել ուսումնական գործընթացներում:

Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջն իր առաքելության համաձայն իրականացնում է երաժշտական ոլորտի 4 ՄԿԾ, որոնք իրենց կառուցվածքով, մոդուլների հաջորդականությամբ համապատասխանում են ՊԿՉ-ներին։ Դրական հանգամանք է, որ քոլեջի ներկայացուցիչները մասնակցություն են ունեցել 3 մասնագիտությունների ՊԿՉ-ների և դրանց մոդուլային ծրագրերի կազմմանը, որի արդյունքում դրանք փորձարկվել են քոլեջում և խթանել մոդուլային ուսուցման ներդրումն ու իրագործումը։ Փորձագիտական խումբն արժևորում է, որ քոլեջը բավականին մեծ ուշադրություն է դարձնում ուսանողների կատարողական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, ստեղծագործականության զարգացմանը, որի համար կիրառվում են տարբեր մեթոդներ, կատարողական տեխնիկաներ, տրամադրվում են ստեղծագործական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ։ Ուսանողները հնարավորություն ունեն նաև ցուցադրելու իրենց կատարողական հմտությունները, որի արդյունքում բարձրանում է քոլեջի ուսանողների մրցունակությունը։ Փորձաքննության արդյունքներով՝ ՄԿԾ-ներում նմանատիպ առաջադրանքները չունեն պարտադիր բաղադրիչ, որոնց ներդրումը և դասակարգումն ըստ տեսական, գործնական բաղադրիչների կարող է էապես բարձրացնել ՄԿԾ-ների արդյունավետությունը։ Ուշագրավ է, որ դասախոսներն ունեն անհատական դասավանդման և գնահատման մոտեցումներ, որոնց հիմքում դրված են ուսանողների առանձնահատկությունները, ինչպես նաև դասավանդման մեթոդներն ընտրելիս հաշվի են առնում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների առանձնահատկությունները՝ պահպանելով ներառականության սկզբունքը և նպաստելով ուսանողակենտրոն ուսուցմանը։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դասավանդման և գնահատման մեթոդների քաղաքականությունը քոլեջի ուշադրության կենտրոնում է, սահմանվել են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ, սակայն ըստ վերջնարդյունքների այդ մեթոդների տարանջատումը, յուրաքանչյուր մոդուլի համար տեսական և գործնական ուսուցման եղանակներին համարժեք առաջադրանքների

և գնահատման ռուբրիկների ներդրումն ու գործարկումը կարող են էականորեն բարձրացնել դասավանդման արդյունավետությունը: Օգտակար կլինի, որ քոլեջը պրակտիկաների շրջանակում համագործակցություն ծավալի ոչ միայն երաժշտական դպրոցների հետ, այլ նաև մասնագիտական գործունեության բնութագրերով սահմանված զբաղմունքի նկարագրերով առանձնացված պրակտիկայի այլ վայրերի հետ, ինչի պարագայում կարող է ընդլայնվել ուսանողների շփման և կատարողական հմտություններ ձեռքբերելու մասնագիտական հարթակը:

Գնահատելի է, որ ՄԿԾ-ների իրականացման համար քոլեջն ունի բարձր որակավորում ունեցող դասախոսական կազմ, շարունակաբար համալրում է արհեստավարժ ու մասնագիտական մեծ փորձ ունեցող դասախոսներով, ինչը դրական ազդեցություն ունի կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Դասախոսական կազմի համալրման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու տեսանկյունից նպատակահարմար է դասախոսական կազմի ընտրության ժամանակ առանձնացնել՝ ըստ մասնագիտությունների առանձնահատկությունների չափանիշներ: Քոլեջում գործարկվում են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, որոնք նպաստել են դասավանդման գործընթացի որոշ կարիքների վերհանմանը, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ այդ մեխանիզմները պարբերականության և համակողմանի վերլուծության անհրաժեշտություն ունեն՝ հնարավորություն ընձեռելով խնդիրների վերհանման գործընթացը դարձնել առավել կանոնակարգած և փոխկապակցել դրանք դասախոսների հետ տարվող աշխատանքների, երիտասարդ դասախոսների մասնագիտական զարգացման հետ: Ինչ վերաբերում է դասախոսական կազմի կայունությանը, ապա գնահատելի է, որ կադրերի համալրման տարբեր գործիքների՝ ռեզերվի, շրջանավարտների միջոցով կադրերի երիտասարդացման շնորհիվ ապահովում է դասախոսական կազմի կայունությունը և սահուն սերդնափոխությունը, ինչի արդյունքում կրթական ծրագրերի իրականացման ռիսկեր քոլեջում չկան:

Անդրադառնալով կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներին ու ենթակառուցվածքներին՝ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը հիմնականում ապահովված է երաժշտական ոլորտի կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ գործիքներով, քայլեր է իրականացնում ուսումնական միջավայրի լավարկման ուղղությամբ՝ որոշակիորեն բարելավելով ռեսուրսները նաև նվիրատվությունների միջոցով: Ֆինանսական նոր աղբյուրների որոնումը, միջազգային ծրագրերին մասնակցության ավելացումը, դրամաշնորհային նախագծերին դիմելը ևս կարող են նպաստել քոլեջի ֆինանսական միջոցների ավելացմանը՝ դրանք ուղղելով ուսումնական միջավայրի բարելավմանը և ներքին շահակիցների կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի շարունակական ջանքերը՝ ուղղված կրթական ծրագրերի բարելավմանը, մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսական կազմի համալրմանը, քոլեջի ֆինանսական միջոցների սահմանում ռեսուրսների թարմացմանը, նպաստում են շնորհվող որակավորումների արժանահավատությանը:

Կառավարման գործընթացները կանոնակարգելու համար քոլեջը մշակել է որոշակի փաստաթղթային հենք, ինչն իր դրական ազդեցությունն է ունեցել գործառույթների որոշակի հստակեցման ու կառավարման մարմինների գործունեության վրա: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջի հաստատված կազմակերպական կառուցվածքում, պաշտոնների նկարագրերում առկա են անհամապատասխանություններ, որոշ դեպքերում գործառութային համընկնումներ, ինչը կառավարման տեսանկյունից խոչընդոտներ կարող է ստեղծել՝ հիերարխիկ ու հորիզոնական կապերի լիարժեք գործարկման համար: Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը փորձի փոխկապակցել ֆինանսական և մարդկային ռեսուրսների հատկացումը ռազմավարական նպատակների հետ, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի քոլեջի առաջանցիկ զարգացումն ապահովելու համար: Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման համար կարևոր է նաև հստակ ու չափելի ցուցիչների սահմանումը, դրանց ներդրումը ռազմավարական և ընթացիկ պլաններում, ինչը կնպաստի պլանավորման գործընթացների լավարկմանը, պլանավորում-հաշվետվողականություն կապերի ձևավորմանը:

Կառավարման և որակի ապահովման համակարգերը մեկ ամբողջության մեջ դիտարկելով՝ փորձագիտական խմբի համար նկատելի է, որ բավականին աշխատանք է իրականացվել քոլեջում որակի ապահովման մշակույթի ներդրման հիմքեր ստեղծելու ուղղությամբ: Մշակվել է փաստաթղթային հենք, որի ամբողջական կիրարկումը, շահակիցների կարիքների ու առանձնահատկությունների հիման վրա լավարկումը կնպաստեն խնդիրներին արագ արձագանքմանը և լավագույն փորձի վերհանմանն ու տարածմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը դեռևս անելիքներ ունի հստակեցնելու կարիքների վերհանման մեխանիզմները և դրանց կիրառումից ակնկալվող արդյունքները, ինչը կնպաստի իրավիճակային կառավարման մոդելից անցում կատարելու երկարաժամկետ ռազմավարական կառավարմանը: Որակի ապահովման համակարգի կողմից հավաստի տվյալների տրամադրումը կարևոր է կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացման նպատակով: Հավաքագրված տվյալների քննարկումը կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների հետ ևս կարևոր է՝ բարձրացնելու շահակիցների վստահությունը որակի ապահովման համակարգի նկատմամբ և այն դարձնելու վստահելի ու հուսալի աղբյուր՝ քոլեջի ռիսկերի ու փոփոխությունների կառավարման համատեքստում:

Որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի որոշ տարրեր ներդրված են փաստաթղթավորման գործընթացներում, այսուհանդերձ առկա է խզում գնահատում-բարելավում շրջափուլերում: ՊԻԳԲ շրջափուլի պարբերական կիրառումը կնպաստի ոչ միայն կառավարման համակարգի, այլև կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը՝ նպաստելով քոլեջի ռազմավարական ուղղությամբ սահմանված նպատակների իրագործմանը:

Այսպիսով, փոխկապակցելով քոլեջում ընթացող ռազմավարական պլանավորման, կառավարման ու վարչարարության գործընթացները և դիտարկելով որակի ապահովման

համակարգի ունեցած ազդեցությունը այս համակարգերի շարունակական բարելավման վրա՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անելիքներ ունի հստակորեն սահմանելու համակարգերի փոխգործակցության արդյունքում ակնկալվող արդյունքները, սահմանելու որակի ապահովման նպատակները, բարձրացնելու շահակիցների շրջանում կարիքների վերհանման ու որոշումների կայացման ուղղությամբ ունեցած նախաձեռնողականությունը՝ ապահովելու հաստատության շարունակական զարգացումն ու կրթական ծրագրերի լավարկումը։

Անցում կատարելով քոլեջի ուսումնական միջավայրին՝ փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քոլեջը շարունակաբար բարելավում է կրթական միջավայրը, նպաստավոր պայմաններ ստեղծում երաժշտական արվեստի ոլորտի մասնագետների թողարկման համար։ Կրթական ծրագրերի առանձնահատկություններով պայմանավորված՝ ուսանողների նկատմամբ անհատական մոտեցումը ևս կարևոր է մրցունակ մասնագետների պատրաստման համատեքստում։ Քոլեջում ստեղծագործական բնույթի ցանկացած գործունեությանը նախորդում է հետազոտության փուլը՝ նպաստելով ուսանողների մոտ ոչ միայն կատարողական կարողությունների զարգացմանը, այլև հետազոտական հմտությունների ձևավորմանը։ Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջի դասախոսական կազմը ևս իրականացնում է ոլորտային հետազոտություններ, մշակում ուսումնական ձեռնարկներ, ինչպես նաև աջակցում ուսանողներին իրենց զեկուցումները պատրաստելիս։ Գործընթացների կանոնակարգման ու դասախոսական կազմի ընդգրկման ծավալների ընդլայնման նպատակով՝ կարևոր է հետազոտական աշխատանքների խրախուսումը քոլեջի կողմից և խրախուսման հստակ չափանիշների սահմանումը։ Ուսանողների պարագայում հետազոտական բնույթի առաջադրանքների արտացոլումը կրթական ծրագրերում և գնահատման չափանիշների տարաջատումը ևս կարևոր են՝ ուսանողների հետազոտական կարողությունների պլանավորման, առաջընթացի չափման ու խրախուսման համար։

Քոլեջն իր գործունեության ուշադրության կենտրոնում է պահում հասարարակական պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը պետության և հասարակության առջև։ Դրա մասին են վկայում գործընթացների, կանոնակարգերի թափանցիկության ապահովումը պաշտոնական կայքէջի միջոցով։ Այսուհանդերձ, հարկ է ուշադրություն դարձնել նաև հաշվետվությունների վերլուծական բնույթին, քանի որ դրանցում նկարագրական հատվածից զատ գործընթացների արդյունավետության գնահատումը, խնդիրների վերհանումը, պլանավորված, սակայն չիրականացված գործընթացների պատճառների վերլուծությունը էապես կնպաստեն հաշվետվողականություն-հետագա բարելավում կապերի ամրապնդմանը և կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացմանը։

Քոլեջը հատկանշական դեր ունի նաև հայ երաժշտության ոլորտի զարգացման, արժեքների փոխանցման գործում, ինչի ուղղությամբ շարունակաբար ջանքեր է գործադրում՝ ընդլայնելու համագործակցությունների ու արտաքին կապերի շրջանակը տարաբնույթ համերգային միջոցառումների, փառատոնների միջոցով։ Քոլեջի ներուժի ուղղորդումը նաև

միջազգային ծրագրերի ուղղությամբ՝ կարող է նպաստել ուսանողների ու դասախոսների շարժունությանը և հնարավորություններ ստեղծել միջազգային լավ փորձի ներդրման ու քոլեջում տեղայնացման ուղղությամբ: Այս համատեքստում կարող է կարևոր լինել հատկապես ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարելավումը, ինչի ուղղությամբ քոլեջը դեռևս անելիքներ ունի: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջն արդյունավետորեն համագործակցում է ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցների հետ: Կարևոր է նաև տեղական կապերի ընդլայնումը և ուսանողների պրակտիկաների համար հնարավորությունների ստեղծումը ոչ միայն երաժշտական դպրոցներում, այլ նաև ոլորտային մասնագիտական հաստատություններում, ինչը կնպաստի ուսանողների կատարողական կարողությունների զարգացմանը և մասնագիտական աշխատանք գտնելու հնարավորությունների ստեղծմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. շահակիցների միասնական պատկերացումներն ու ընկալումը քոլեջի առաքելության ու Հանրապետությունում ունեցած դերի նկատմամբ,
2. քոլեջի առաքելությանն ու պետական կրթական չափորոշիչներին համահունչ կրթական ծրագրերի իրականացումը,
3. ուսանողակենտրոն ուսուցման մեթոդների կիրառումը դասավանդման գործընթացում,
4. ուսուցման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների կարիքների կարևորումը քոլեջի կողմից և ներառականության սկզբունքի ապահովումը,
5. բարձր մասնագիտական որակավորմամբ և պրակտիկ ոլորտից ներգրավված պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը,
6. դասախոսական կազմի կայունության ու սահուն սերնդափոխությանն ուղղված քայլերի իրականացումը,
7. ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի և ստեղծագործականության ներառվածությունը կատարողական հմտությունների զարգացմանը զուգընթաց հետազոտող-ստեղծագործողներ պատրաստելու համար,
8. կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման համար ուսումնական անհրաժեշտ միջավայրի առկայությունը,
9. հասարակական պատասխանատվության ու գործընթացների թափանցիկությանն ուղղված քոլեջի ջանքերը,
10. երաժշտական ու արվեստի դպրոցների հետ համագործակցության շրջանակը պրակտիկաների իրականացման, դասախոսական կազմի համալրման ու փորձի փոխանակման նպատակով:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ռազմավարական կառավարման և պլանավորման գործընթացում կիրառվող ցուցիչների անկատարությունը,
2. կառավարման ու կրթական ծրագրերի իրականացման գործընթացում ՊԻԳԲ շրջափուլի ոչ ամբողջական ու պարբերաբար կիրառումը,
3. կրթական ծրագրերի համեմատական վերլուծության և լավագույն փորձի ներդրման ոչ կանոնակարգված լինելը,
4. դասախոսական կազմի գնահատման մեխանիզմների և դրանց կիրառման արդյունքում պլանավորված գործընթացների միջև եղած թույլ կապը,
5. հետազոտական բնույթի առաջադրանքների արտացոլված չլինելը կրթական ծրագրերում և դրանց համար գնահատման չափանիշների տարանջատված չլինելը,
6. դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմների պակասը, այդ թվում՝ հետազոտական գործունեության խթանման ուղղությամբ,
7. ֆինանսական աղբյուրների դիվերսիֆիկացիայի պակասը և ֆինանսական ռեսուրսներ-սահմանված նպատակներ կապերի խզումը,
8. հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի թույլ արտահայտումը,
9. մասնագիտական գործունեության զբաղմունքի նկարագրերով առանձնացված պրակտիկաների վայրերի սակավությունը,
10. ՈԱ գործընթացների անկատարությունը և տվյալների հավաքագրման մեխանիզմների ուղղությամբ շահակիցների ունեցած վստահության պակասը։

Խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Իրականացնել ՌԾ կատարողականի գնահատում՝ հաշվի առնելով սահմանված ցուցիչները և գնահատման արդյունքները դնել ռազմավարական պլանավորման հիմքում։
2. Գնահատել ներքին և արտաքին միջավայրերի կարիքների վերհանման գործիքակազմի արդյունավետությունը և վերանայել այն՝ հիմքում ունենալով վերլուծական տվյալներ։
3. Փոխկապակցել սահմանված ցուցիչները պլանավորման գործընթացներին՝ նպաստելու ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացմանը։

Կառավարումն ու վարչարարությունը

4. Քոլեջի կազմակերպական կառուցվածքը համապատասխանեցնել գործող հաստիքացուցակին՝ խուսափելով նաև գործառութային կրկնություններից։
5. Կիսամյակային և տարեկան պլանավորումների հիմքում դնել ռազմավարական նպատակները և խնդիրները՝ կապակցելով դրանք քոլեջի զարգացման ուղղություններին։
6. Այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրներ գտնել՝ քոլեջի զարգացման բյուջե ձևավորելու և երկարաժամկետ զարգացումն ապահովելու համար։

7. Մշակել և ներդնել շահակիցների կարիքների գնահատման գործիքներ՝ դրանց արդյունքները դնելով կառավարչական որոշումների կայացման հիմքում։
8. Սահմանել կառավարման համակարգի արդյունավետության և ծառայությունների որակի բարձրացման հստակ և չափելի ցուցիչներ՝ կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով։

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Մշակել և ներդնել ուսանողների գնահատման հստակ չափանիշներ՝ հաշվի առնելով մասնագիտությունների առանձնահատկությունները։
10. Հստակեցնել դասավանդման մեթոդ-գնահատման մեթոդ-վերջնարդյունք կապը՝ կրթական ծրագրերով նախատեսված արդյունքներն ապահովելու և աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագետներ թողարկելու համար։
11. ՄԿԾ-ներում ներդնել առաջադրանքների պարտադիր արտացոլման բաղադրիչը՝ նպաստելով կրթական ծրագրերի պլանավորման ու կառավարման գործընթացի լավարկմանը։
12. Ներդնել համանման լավագույն փորձի ուսումնասիրության և փորձի տեղայնացման մեխանիզմներ՝ նպաստելու ուսանողների շարժունությանը։

Ուսանողները

13. Ներդնել օտար լեզուների ուղղությամբ լրացուցիչ պարապմունքների հնարավորություններ՝ նպաստելու ուսանողների լեզվահմացության բարձրացմանը։
14. Պարբերաբար թարմացնել շրջանավարտների բազան, ապահովել հետադարձ կապը նրանց հետ՝ բացահայտված կարիքները քննարկելով կրթական ծրագրերի պատասխանատուների հետ։
15. Հստակեցնել Ուսանողական խորհրդի գործառույթները՝ նպաստելու ուսանողների կրթական կարիքների վերհանմանը և իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացմանը։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Կատարելագործել դասախոսների գնահատման մեխանիզմները՝ հստակեցնելով դասալսումների իրականացման գործընթացները և դրանցից ակնկալվող արդյունքները։
17. Իրականացված դասալսումների արդյունքները ներդնել դասախոսների մասնագիտական կարողությունների զարգացման հիմքում։
18. Մշակել և ներդնել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և խրախուսման հստակ չափանիշներ՝ գործընթացներն առավել թափանցիկ ու արդյունավետ դարձնելու համար։

Հետազոտությունը և զարգացումը

19. Տարանջատել քոլեջի հետազոտական հետաքրքրությունները՝ ըստ կրթական ծրագրերի առանձնահատկությունների:

20. Քոլեջում առկա հետազոտական-ստեղծագործական բաղադրիչ պարունակող առաջադրանքները դարձնել կրթական ծրագրերի պարտադիր բաղադրիչ՝ ուսանողների հետազոտական գործունեությունն առավել պլանավորված դարձնելու համար:

21. Ներդնել հետազոտական աշխատանքների պլանավորման և խրախուսման մեխանիզմներ՝ դասախոսների և ուսանողների առավել լայն շրջանակի ընդգրկման համար:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

22. Ներդնել ֆինանսավորման նոր մոդելներ և ֆիանսական միջոցների հայթայթման մեխանիզմներ՝ քոլեջի ռազմավարական առաջնահերթությունների իրագործման համար:

23. Մշակել մարտավարություն երաժշտական գործիքների աստիճանական թարմացման համար՝ ապահովելու կրթական ծրագրերի վերջնարդյունքները:

24. Իրականացնել կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ՝ ծախսարդյուանավետության բարձրացման համար:

25. Ապահովել ռեսուրսներից բավարարվածության գնահատման պարբերականությունը և հետագա բարելավումները պլանավորել կարիքների վերհանման հիմքով:

26. Ներդնել փաստաթղթաշրջանառության իրականացման միասնական էլեկտրոնային համակարգ վարչարարության գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

Հասարակական պատասխանատվությունը

27. Հաշվետվություններում շեշտադրել վերլուծական բաղադրիչը՝ հիմնվելով քանակական և որակական գնահատումների վրա և դրանք դնել բարելավման հետագա գործընթացների պլանավորման հիմքում:

28. Գնահատել հաստատության կողմից թափանցիկության ապահովման գործիքների արդյունավետությունը և լավարկել դրանք քոլեջի գործընթացների մասին իրազեկվածության բարձրացման համար:

29. Գործարկել PR ռազմարություն՝ օգտագործելով քոլեջի ստեղծագործական ներուժը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

30. Ընդլայնել պրակտիկաների իրականացման գործընկերային շրջանակը՝ հաշվի առնելով շնորհվող որակավորումների և զբաղմունքի նկարագրերի առնչությունը:

31. Նպաստել ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության բարձրացմանը միջազգային փորձի ուսումնասիրման և միջազգային ծրագրերի մասնակցության ընդլայնման համար:

32. Հաստատության միջազգայնացման ապահովման համար խթանել միջազգային գործընկերների հետ կնքված պայմանագրերով նախատեսված գործողությունների իրականացումը:

Որակի ներքին ապահովման համակարգը

33. Գնահատել և վերանայել որակի ապահովման գործիքակազմը շահակիցների կարքիների վերհանման և արժանահավատ տվյալների դուրսբերման նպատակով:

34. Ներքին և արտաքին շահակիցներին ներգրավել որակի ներքին ապահովման գործընթացներում որակի մշակույթի ձևավորման և տարածման նպատակով:

35. Պարբերաբար իրականացնել հավաքագրված տվյալների հիմքով ամփոփումներ և վերլուծություններ՝ նպաստելու կառավարչական և կրթական գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

36. Վերանայել որակի ապահովման պլանի ձևաչափը՝ դրա ձևավորման համար հիմք ընդունելով իրականացված հաշվետվությունները և սահմանելով հստակ գնահատման ցուցիչներ:

37. Մշակել գործիքակազմ որակի ապահովման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի մի փուլից մյուսը սահուն և ամբողջական անցնելու համար:

_____

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23-ը հունվարի, 2024 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամակնավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[1] կողմից.

Արմենուհի Մհերյան՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Հայաստանի եվրոպական համալսարանի «Ֆինանսներ և բանկային գործ» ամբիոնի վարիչ, խմբի ղեկավար:

Հասմիկ Մխիթարյան՝ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի կրթության որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:

Մարիամ Հովհաննիսյան՝ Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի դասախոս, կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար, փորձագիտական խմբի անդամ:

Նարեկ Մելիքսեթյան՝ Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի «Ռեժիսուրա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը 2023թ. հունվարի 13-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը առցանց աշխատաժողովներ է իրականացրել հավատարմագրվող ՄԿՈ հաստատությունների հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունն իրականացրել է փորձնական SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ: Ինքնավերլուծության իրականացման ընթացքում ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվել են ընթացիկ քննարկումներ առաջացած հարցերը պարզաբանելու նպատակով:

Ինքնավերլուծության գործընթացում ներգրավվել են հաստատության վարչական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները, դասախոսները, ուսանողները:

Նախապատրաստական փուլ

Քոլեջի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում,
4. նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի

պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն ուսումնասիրել են ուսանողներին տրվող հանձնարարականները, իրականացրել են դասալսումներ՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը:

Նախնական այց

Փորձագիտական այցին նախորդող շրջանում իրականացվել է նախապատրաստական այց քոլեջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2], ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. հոկտեմբերի 16-19-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցին նախորդող շաբաթվա ընթացքում փորձագիտական խմբի անդամները և համակարգողն այցելել են քոլեջ, դիտարկել քոլեջի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները[3], իրականացրել դասալսումներ: Այնուհետև փորձագետներն ու համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբն

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

[3] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

իրականացրել է նաև փաստաթղթերի[4] ուսումնասիրություն, մասնակցել ուսանողների կողմից կազմակերպված համերգի:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի անդամների հաստատումից հետո նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 12.01.2024թ.-ին: ՈԱԱԿ-ը հաստատության դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 19.01.2024թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է հաստատության և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել են ներկայացված դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ:

Հաշվի առնելով հաստատության դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը:

_____

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

23-ը հունվարի, 2024 թ.

[4] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Երևանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական ուսումնարանը, այսօր արդեն՝ քոլեջը (վերանվանումը՝ 2002 թ.), հիմնադրվել է 1967 թ. հոկտեմբերի 1-ին: Համալրվելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտներով և փորձառու մանկավարժներով, նորաստեղծ ուսումնարանի դասախոսական կազմն իր հիմնադիր ղեկավարության եռանդուն ջանքերի շնորհիվ, անցած տարիների ընթացքում ծավալել է արդյունավետ գործունեություն երաժշտական կրթության միջին մասնագիտական օղակում: Կարճ ժամանակամիջոցում դառնալով հանրապետության առաջատար կրթական հաստատություններից մեկը՝ ուսումնարանն արժանացավ 20-րդ հարյուրամյակի հայ կոմպոզիտորական դպրոցի ամենավառ ներկայացուցիչներից մեկի՝ Առնո Բաբաջանյանի անունը կրելու բարձր պատվին: Իր 55-ամյա պատմության ընթացքում Քոլեջը երաժշտական միջին մասնագիտական կրթություն է տվել ավելի քան 5000 պատանիների:

Քոլեջի գործունեության հիմնական նպատակն է հասարակական կյանքի տարբեր ոլորտների համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան երաժշտական կրտսեր մասնագետների պատրաստումը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը:

Կրթություն. Ներկայումս քոլեջում սովորում է 397 ուսանող: Գործում են հետևյալ բաժինները՝ դաշնամուրային, լարային, փողային, հարվածային, ժողովրդական գործիքների, երգեցողության (ակադեմիական, ժողովրդական և էստրադային), երգչախմբավարության, բաժշտության տեսության:

Քոլեջում դասավանդում են պրոֆեսիոնալ մանկավարժներ, որոնց շարքերում կան ինչպես շնորհալի երիտասարդ, այնպես էլ բազմամյա մանկավարժական փորձ և ուսումնական գործընթացում իրենց ավանդն ունեցող դասախոսներ, այդ թվում՝ Երևանի պետական կոնսերվատորիայի դոցենտներ և պրոֆեսորներ:

Քոլեջը պարբերաբար կազմակերպում է տարբեր մրցույթներ, մրցույթ-փառատոններ (այդ թվում՝ միջազգային), ստուգատեսներ, համերգային երեկոներ: Քոլեջում գործում են կամերային նվագախումբ, ժողովրդական գործիքների նվագախումբ, փողային գործիքների նվագախումբ, ուսանողական երգչախմբեր, լարային քառյակ, ժողովրդական գործիքների համույթներ, տղաների վոկալ համույթ, երաժշտա-թատերական ստուդիա:

Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում. երաժշտական մասնագիտական ոլորտում «հետազոտություն» եզրույթի ներքո կատարողական մասնագիտությունների մասով քոլեջը դիտարկում է կատարողական կերպերի, սկզբունքների, մեթոդների, ավանդույթների համեմատական վերլուծություն, դրանց տեղայնացում՝ համաձայն մասնագիտական երաժշտական մոտեցումների: Հետազոտության բաղադրիչն առկա է ստեղծագործությունների յուրացման բոլոր փուլերում և նպաստում է երաժշտական

նյութի կատարմանը գիտակից մոտենալուն և կատարողական գործընթացներում՝ մոտեցումների հիմնավորվածության։

Արտաքին կապեր. Փորձի փոխանակման գործընթացներ առաջնահերթորեն Քոլեջն իրականացնում է Հանրապետության այլ նմանատիպ հաստատությունների հետ։ Քոլեջի Ռազմավարակն ծրագրի համաձայն՝ հաստատությունը նպատակ ունի ապահովել միջազգայնացման գործընթացներ։ Միջազգայնացման խթանման համար քոլեջը պլանավորել է շարունակել արտաքին կապերի համակողմանի զարգացումը, մեծացնել կապերն աշխատաշուկայի՝ հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ։ Քոլեջը նախատեսում է նաև պահպանել և զարգացնել Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթի ավանդույթը՝ ուղղելով այն Քոլեջի միջազգայնացմանը, ընդլայնել քոլեջի միջոցառումների /համերգներ, գիտաժողովներ, թեմատիկ և այլ միջոցառումներ/ ցանկը, աշխարհագրությունը, զարգացնել որակական-բովանդակային կողմը, ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը։

Որակի ապահովում. Քոլեջում Որակի ապահովման բաժինը գործում է 2011 թվականից։ Բաժինը հանդիսանում է կապող օղակ Քոլեջի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների միջև։ Բաժինը պատասխանատու է ներքին կառավարման, ուսուցման, ուսումնառության, կադրերի ներգրավման, խրախուսման, կրթական ծրագրերի բարելավումների, մշտադիտարկումների, ուսանողների և կադրերի գնահատման աշխատանքների պատշաճ և պարբերաբար կազմակերպման, արդյունքների ամփոփման, առաջարկությունների ներկայացման համար։ Բաժինը կազմակերպում է նաև քոլեջի գործունեության ինքնավերլուծության աշխատանքների իրականացումն արտաքին գնահատման համար։

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն)։*

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական ծրագրով (այսուհետ՝ ՌԾ) սահմանված առաքելությունն է կրթության և մշակութային զարգացման պետական ռազմավարության շրջանակներում արդյունավետ կրթական ծրագրերով միջին մասնագիտական կրթության ոլորտում որակյալ երաժշտական կրթության ապահովումը, երաժշտական արվեստի համապատասխան որակավորմամբ մասնագետների ու մանկավարժական կադրերի պատրաստումը, ազգային հոգևոր և մշակութային արժեքների պահպանումը և տարածումը: Գործող ՌԾ-ն ներառում է նաև քոլեջի տեսլականը և արժեքները, ըստ որի քոլեջը ձգտում է տրամադրել երաժշտական ոլորտում որակյալ կրթական ծրագրեր, իրականացնել նորարարական ուսանողամետ և ուսանողակենտրոն ուսուցում: Քոլեջն իր առաքելության համաձայն իրականացնում է երաժշտական ոլորտի ՄԿԾ-ներ՝ պատրաստելով ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան մասնագետներ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը մշակել է ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց, որտեղ հստակ տարանջատված են գործողությունները, պատասխանատուները, իրականացման ժամկետները: Սահմանված են նաև արդյունքների գնահատման ցուցիչներ, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ցուցիչները դեռևս չեն դրվում քոլեջի պլանների հիմքում: Ինքնավերլուծության համաձայն՝ 2014-2018թթ. քոլեջի զարգացման հայեցակարգում դրված խնդիրները գնահատվել են հիմնականում իրատեսական և կատարվել մոտ 90%-ով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նախորդ ռազմավարական շրջափուլի արդյունքների վերաբերյալ վերլուծություններ առկա չեն, որոնք հիմք են հանդիսացել 2019-2024թթ. ՌԾ-ի նպատակների և խնդիրների սահմանման համար: Հարկ է նշել, որ գործող և նախորդ ՌԾ-ների միջև գրեթե տարբերություններ առկա չեն: Կարելի է նշել, որ գործող ՌԾ-ում նպատակ 2-ն առավել ընդլայնված է ներկայացված, մասնավորապես՝ հասարակայնության հետ կապերի և հանրային պատասխանատվության շրջանակում տարանջատվել են հասարակայնության հետ կապերի հետագա զարգացման, միջազգայնացման գործընթացների և հանրային պատասխանատվության բարձրացման խնդիրները: Առանձնացված են նշյալ խնդիրների լուծմանն ուղղված քայլերը:

Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների շրջանակը ներառում է վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներին, դասավանդողներին, ուսանողներին, ծնողներին, գործատուներին, շրջանավարտներին, երաժշտության ոլորտի կազմակերպություններին:

Քոլեջը ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման համար իրականցնում է հարցումներ, որոնք, ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, համակարգված և կանոնակարգված չեն: Գործող ռազմավարական նպատակներն ու խնդիրներն ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, մասնավորապես՝ քոլեջը նախատեսել է իրականացնել մասնագիտական վերապատրաստումներ, ունենալ ռեսուրսներով հագեցած ուսումնական և աշխատանքային միջավայր, կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները ուսումնական գործընթացում և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակական վերլուծություններ, որոնք հիմք են դարձել 2019-2024թթ. ՌԾ-ի նպատակների և խնդիրների սահմանման համար, այսուհանդերձ առկա չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցների համար քոլեջի առաքելությունը, ՌԾ նպատակները և խնդիրները ընկալելի և ընդունելի են: Մասնավորապես, կարելի է նշել, որ շահակիցները կարևորում են քոլեջի դերը երաժշական ոլորտի մասնագետների պատրաստման և համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով երաժշտական դպրոցները համալրելու հարցում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի շահակիցները քոլեջի դերակատարումը տեսնում են նաև համապատասխան գիտելիքներ և կարողություններ ունեցող շրջանավարտներ պատրաստելու գործում, որոնք կրթությունը կշարունակեն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում և անցում կկատարեն կրթական հաջորդ աստիճանին:

Քոլեջը 2019-2020 ուսումնական տարվա կտրվածքով ներկայացրել է 2019-2024թթ. ՌԾ-ի կատարողական, որը համադրելի է ՌԾ-ի պլան ժամանակացույցի հետ: Հարկ է նշել, որ այլ տարիների կտրվածքով ՌԾ-ի կատարողականներ առկա չեն: Քոլեջը 2023թ.-ին մշակել է ռազմավարական ծրագրի մշտադիտարկման ընթացակարգ, որը դեռևս չի կիրառվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՌԾ-ով սահմանված նպատակներից քոլեջին հաջողվել է տարբեր գործընթացների համար ձևավորել փաստաթղթային հենք, որոշակիորեն բարելավել նյութական ռեսուրսները, զարգացնել արտաքին համագործակցությունները, և այլն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջին դեռ չի հաջողվել իրականացնել ՌԾ-ով սահմանված ֆինանսական այլընտրանքային աղբյուրների ներգրավումը, ֆինանսական պլանավորման համապատասխանեցումը ռազմավարական նպատակներին, որակի ներքին գնահատման չափանիշներին և ինքնագնահատման գործընթացին վերաբերող վերլուծական հաշվետվության հրապարակայնության ու թափանցիկության ապահովումը, էլեկտրոնային գրադարանի ձևավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ կիրառումը ուսումնական գործընթացներում և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի առաքելությունն արտահայտում է հաստատության կողմից սահմանված հիմնական նպատակները, հստակ է ձևակերպված և միտված է երաժշտական արվեստի, ազգային հոգևոր և մշակութային արժեքների պահպանմանն ու տարածմանը: Ողջունելի է, որ քոլեջի նպատակադրումն է

երաժշտական ոլորտում որակյալ կրթական ծրագրերի իրականացումը, նորարարական ուսանողամետ և ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպումը՝ նպաստելով երաժշտական մշակույթի տարածմանը:

Գովելի է, որ քոլեջի ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցում տարանջատված են գործողությունները, դրանց պատասխանատուները և իրականացման ժամկետները, ինչը որոշակի հիմքեր է ստեղծում ռազմավարական պլանավորման գործընթացների իրականացման համար: Կարևոր հանգամանք է, որ քոլեջը սահմանել է ՌԾ-ի գործողությունների որոշ ցուցիչներ: Այդուհանդերձ մտահոգիչ է, որ այդ ցուցիչները չեն դրվում քոլեջի պլանավորումների հիմքում, ինչը կնպաստեր պլանավորման գործընթացների ինստիտուցիոնալացմանը, իսկ նախորդ ռազմավարական շրջափուլի արդյունքների վերաբերյալ վերլուծությունների և դրանց համարժեք ամփոփումների առկայությունը կարող էր հիմք հանդիսանալ 2019-2024թթ. ՌԾ-ի մշակման համար և նպաստել ՌԾ-ի իրատեսականության գնահատմանն ու քոլեջի կայուն զարգացմանը:

Դրական է, որ քոլեջն ընդգծել է ներքին և արտաքին շահակիցների շրջանակը, ավելին՝ քոլեջի առաքելությունը, ՌԾ նպատակները և խնդիրները ընկալելի և ընդունելի են շահակիցների համար, նրանց կարիքների վերհանման համար գործարկվում են հարցումներ: Սակայն անհանգստացնող է, որ այդ հարցումները կանոնակարգված չեն և իրականացման պարբերականություն չեն ապահովում, ինչի արդյունքում կարող է վտանգվել շահակիցների կարիքների վերհանման գործընթացը: Նշյալի համատեքստում փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի ռազմավարական նպատակներն ու խնդիրներն ընդհանուր առմամբ արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, այդուհանդերձ 2019-2024թթ. ՌԾ-ի նպատակների և խնդիրների սահմանման հիմքում դրված որակական վերլուծությունները բացակայում են, ինչը կարող էր նպաստել արդյունքահենք ՌԾ-ի մշակմանը: Դրական է, որ քոլեջը մեկ ուստարվա կտրվածքով կազմել է ՌԾ-ի պլան ժամանակացույցին համահունչ ՌԾ-ի կատարողական, մշակել է ռազմավարական ծրագրի մշտադիտարկման ընթացակարգ, որը դեռևս չի գործարկվել, իսկ այլ տարիների կտրվածքով ՌԾ-ի կատարողականների առկայությունը կարող էր հնարավորություն ընձեռել ՌԾ-ի գնահատման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ իր առջև դրված նպատակադրումներից քոլեջին հաջողվել է ձևավորել գործունեության իրականացման անհրաժեշտ փաստաթղթային հենքը, որոշակիորեն բարելավվել են նյութական ռեսուրսները, ընդլայնվել են արտաքին համագործակցությունները: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ որոշ գործընթացներ, ինչպիսիք են ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ներգրավումը, ֆինանսական պլանավորման համապատասխանեցումը ռազմավարական նպատակներին, քանակական և որակական վերլուծություններով հաշվետվությունների կազմումը և այլն, դեռևս իրականացված չեն, փորձագիտական խումբը գտնում է, որ սահմանված հստակ ցուցիչների հիմքով պլանավորումները կարևոր են քոլեջի ռազմավարական կառավարման համակարգի անխափան գործունեության և կրթական գործընթացների արդյունավետ իրականացման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը սահմանել է իր գործունեության հիմնական ոլորտներն արտացոլող առաքելություն, որը ընկալելի է արտաքին և ներքին շահակիցների կողմից, իր առաքելությանը համահունչ իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր երաժշտության ոլորտում, ներդրել է գործունեության գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է: Քոլեջի կանոնադրության համաձայն՝ քոլեջի կառավարման մարմիններն են հիմնադիրը, լիազորված պետական կառավարման մարմինը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, գործադիր մարմինը՝ քոլեջի տնօրենը: Քոլեջի կառուցվածքի համաձայն հաստատությունում գործում են Մանկավարժական, Ուսումնամեթոդական, Տնօրինական, Ուսանողական խորհուրդները: Տնօրենը նախագահում է քոլեջի Մանկավարժական, Տնօրինական, Ուսումնամեթոդական խորհուրդները և, ըստ Խորհուրդների ձևավորման և գործունեության ընթացակարգերի, հաշվետվություն է ներկայացվում ԿԽ-ին՝ Խորհուրդների կատարած աշխատանքների վերաբերյալ: Փարձագիտական այցից պարզ դարձավ, որ Խորհուրդների կողմից դուրս բերված կարևոր խնդիրներն ու դրանց հիմքով իրականացված բարելավումները ամփոփված չեն հաշվետվություններում և չեն քննարկվում ԿԽ-ում: Քոլեջի կառավարչական գործընթացների ապահովման համար անհրաժեշտ փաստաթղթային հենքն առկա է (Կանոնադրություն, Կառավարման խորհրդի աշխատակարգ, Մանկավարժական, Ուսումնամեթոդական, Տնօրինական խորհուրդների ձևավորման և գործունեության ընթացակարգեր, Ուսումնական մասի գործունեության կանոնակարգ, Ներքին կարգապահական կանոններ և այլ ընթացակարգեր ու կանոնակարգեր): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի հաստատված կազմակերպական կառուցվածքը չի համապատասխանում գործող կառուցվածքին: 2023թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ հաստատված հաստիքացուցակով քոլեջում առկա են հաստիքներ, որոնք արտացոլված չեն քոլեջի կազմակերպական կառուցվածքում, ինչպես օրինակ՝ պրակտիկայի ղեկավար,

իրավախորհրդատու։ Փորձագիտական այցից պարզ դարձավ՝ կան աշխատակիցներ, որոնց համար նախատեսված է գործառութային շրջանակ, որը սակայն ամրագրված չէ պաշտոնի նկարագրերով և իրականացվում են հիմանականում հասարակական հիմունքներով, օրինակ՝ հանրային կապերի պատասխանատու, որակի ապահովման բաժնի աշխատակից: Հանրային կապերի քաղաքականության և ընթացակարգի համաձայն՝ հանրային կապերի պատասխանատուի պարտականությունները պետք է ներկայացված լինեն պաշտոնի հրահանգում։ Քոլեջի կառուցվածքում ևս այս հաստիքն առանձնացված չէ, որոշ գործառույթներ (օրինակ՝ վարել քոլեջի պաշտոնական էջերը) դրված են քոլեջի կազմակերպչադաստիարակչական գծով փոխտնօրենի վրա։ Բացի այդ, գրադարանի վարիչի, գրադարանավարի և գրադարանի լաբորանտի գործառույթները հստակ տարանջատված չեն, և առկա են գործառույթների համընկնումներ (գրադարանի լաբորանտի և գրադարանավարի համար սահմանված է միևնույն գրադարանի աշխատանքների կազմակերպման և իրականացման գործառույթը)։

2019-2022թթ. եկամուտների և ծախսերի նախահաշիվների տվյալներով պետական բյուջեից մուտքերի և քոլեջի ծախսերի վերաբերյալ կառուցվածքային տվյալները գրեթե անփոփոխ են, մասնավորաբար, 2022թ.տվյալներով բյուջետային մուտքերը կազմում են ընդհանուր մուտքերի շուրջ 88%-ը, 12%-ը՝ արտաբյուջետային մուտքերն են (ուսման վարձավճարներից մուտքեր)։ Քոլեջն իր ծախսերի գերակշիռ մասը՝ 94,2%-ը, ուղղում է աշխատավարձի ֆոնդին, ընդ որում՝ ընդհանուր ծախսերի 65%-ը կազմում է դասախոսական անձնակազմի վարձատրությունը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023թ. բյուջեն ունի գրեթե նույն եկամտային և ծախսային համամասնությունները։ Քոլեջի ՌԾ-ով սահմանված 3-րդ նպատակը վերաբերում է որակյալ ծառայությունների, արդյունավետ կառավարման համակարգի և ֆինանսական կայունության ապահովմանը։ Նշյալ նպատակադրման համար սահմանված խնդիրներն են՝ ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ներգրավումը, ֆինանսավորման համապատասխանեցումը ռազմավարական նպատակներին, մասնավորապես՝ ձեռնարկատիրական գործունեության ծավալում, կարճաժամկետ դասընթացների կազմակերպում, նոր մասնագիտությունների գործարկում, նախաձեռնությունների ֆինանսավորում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սահմանված նպատակների արդյունքային շրջանակն ամփոփված չէ՝ նոր մասնագիտություններ չեն գործարկվել, ձեռնարկատիրական գործունեություն չի ծավալվել, նախաձեռնությունների ֆինանսավորման մոդելը ևս գործարկված չէ։ Ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների նախընտրելիության տեսանկյունից քոլեջն իրականացնում է միայն վճարովի կարճաժամկետ դասընթացներ, որոնցից մուտքերը կազմում են արտաբյուջետային մուտքերի շուրջ 0,02%-ը։ Ֆինանսական կայունության ապահովման հիմքերը դեռևս տեսանելի չեն, մասնավորապես՝ ֆինանսական կայունության ցուցանիշները հաշվարկված և վերլուծված չեն, բացի այդ քոլեջը ծախսարդյունավետության գնահատումներ չի իրականացրել։ Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ֆինանսական սուղ պայմաններում քոլեջը փորձում է իրականացնել իր առջև դրված խնդիրները. մասնավորապես բավական ծախսատար մասնագիտություններ իրականացնել՝

անհատապես աշխատելով յուրաքանչյուր ուսանողի հետ և ապահովելով կրթական ծրագրերի վերջնարդյունքները, շարունակաբար համալրելով քոլեջի դասախոսական կազմը ոլորտի պրոֆեսիոնալ մասնագետներով, որոնք իրենց փորձն ու գիտելիքները կիսում են ուսանողների հետ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կառավարման համակարգի արդյունավետության և ծառայությունների որակի բարձրացման ապահովման համատեքստում քոլեջը չի սահմանել հստակ և չափելի ցուցիչներ, օրինակ 2019-2024թթ. ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցով սահմանված ցուցիչներն են՝ արդյունավետության գնահատման մեխանիզմներ, քաղաքականություն, ընթացակարգեր, ներգրավվածության վերաբերյալ ուսանողների բավարարվածության հարցումներ և վերլուծություն, հետադարձ կապի մեխանիզմներ, բավարարվածության հարցումներ և այլն:

Քոլեջի Կառավարման խորհուրդը բաղկացած է 11 անդամից, որտեղ ընդգրկված է 2 դասախոս և 3 ուսանող: Դասախոսների թեկնածությունն առաջարկվում է մանկավարժական խորհրդում, իսկ ուսանողներինը՝ ուսանողական խորհրդում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները դեռևս նախաձեռնողական չեն, կառավարման մակարդակում նրանց առաջարկներով տեղի ունեցած փոփոխությունների օրինակներ առկա չեն: Դասախոսական համակազմը ներկայացված է Տնօրինական, Մանկավարժական, Ուսումնամեթոդական խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհուրդներում քննարկվում են ուսումնական գործընթացին առնչվող ընթացիկ հարցերը: Հարկ է հավելել, որ Կառավարման խորհդում կայացված որոշումների մասին տեղեկատվության տարածման ու թափանցիկության մեխանիզմներն անկատար են:

Քոլեջի երկարաժամկետ պլանավորումն իրականացվում է 2019-2024թթ. ՌԾ-ի համաձայն: Ընթացիկ կիսամյակային աշխատանքները քոլեջը դիտարկում է կարճաժամկետ պլանավորման համատեքստում, իսկ տարեկան աշխատանքային պլանները՝ որպես միջանկյալ պլանավորում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 2023-2024 ուստարվա ամբիոնների կիսամյակային աշխատանքային պլանները չեն ներառում նախորդ ուստարվա արդյունքներով դուրսբերված խնդիրների բարելավման գործողությունները:

Քոլեջի ներկայացմամբ ստորաբաժանումների աշխատանքային պլանները և հաշվետվությունները ներառված են քոլեջի տարեկան աշխատանքային պլաններում և հաշվետվություններում: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ ստորաբաժանումների հաշվետվություններն արտացոլված չեն քոլեջի տարեկան հաշվետվություններում, հաշվետվությունների վերլուծություններ առկա չեն: Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ ստորաբաժանումների գործունեության արդյունավետության հստակ ցուցիչներ սահմանված չեն: Ըստ տարիների քոլեջի տարեկան հաշվետվությունների և ամբիոնների կիսամյակային հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում տեղեկատվական բնույթի են:

Աշխատանքային պլանների և դրանց համապատասխան հաշվետվությունների համադրության արդյունքում պարզ դարձավ, որ հաշվետվություններում ներառված

տեղեկատվությունը համարժեք չէ պլանավորումներին: Բացի այդ, հաշվետվությունները ներառում են որոշ քանակական տվյալներ, իսկ քանակական և որակական վերլուծությունները բացակայում են: Բացի այդ, հստակ չեն հաշվետվություններով դուրս բերված բարելավման ենթակա խնդիրները հաջորդ տարվա աշխատանքային պլաններում ներառելու մեխանիզմները:

Քոլեջը դիտարկում է իր գործունեության վրա ազդող միայն արտաքին գործոնները՝ դեմոգրաֆիկ փոփոխություններ, ֆորս-մաժորներ, օրենսդրական դաշտ և այլն, իսկ ներքին գործոններն առանձնացված և դասակարգված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին գործոնների ազդեցության գնահատում քոլեջը չի իրականացրել, և ռիսկերի կառավարման մեխանիզմներն և գործիքները մշակված չեն: Բացի այդ, առկա չեն քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի գնահատման և կառավարման մեխանիզմներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռիսկերի շրջանակում դիտարկվում են հիմնականում արտաքին ազդակները, ներքին ռիսկերը չեն դիտարկվել քոլեջի կողմից հետագա բարելավման նպատակով:

Հարկ է նշել, որ ընթացիկ ծախսերի կատարման ռիսկերը քոլեջի կառավարման տիրույթում են: Փոփոխությունների կառավարաման համատեքստում քոլեջն ըստ անհրաժեշտության փորձում է գտնել իրավիճակային լուծումներ, ինչպես օրինակ պատերազմական և համավարակային պայմաններում: Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջը բարելավման գործընթացներում որակի ապահովման համակարգի կողմից հավաքագրված տվյալներից ստացված արդյունքների կիրառելիությունը խնդրահարույց է համարում, մասնավորապես ըստ քոլեջի՝ դրանք չեն արտահայտում շահակիցների ամբողջական կարիքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը, գնահատելով տվյալների հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը, 2020 թվականից դասախոսների և քոլեջի գործունեության գնահատման վերաբերյալ հարցումներ չի իրականացնում: Ներկայումս փորձում են գտնել առավել արդյունավետ մեխանիզմներ:

Կառավարման մարմինները համագործակցում են որակի ապահովման պատասխանատուների հետ, սակայն հավաստի տվյալների հիմքով տեղի ունեցած փոփոխությունների օրինակներ առկա չեն:

Քոլեջը կարևորում է բոլոր գործընթացների հիմքում ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքի կիրառումը: Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ կառավարման տիրույթը դեռևս պլանավորում-իրականացում շրջափուլում է, գնահատում-բարելավում շրջափուլը դեռևս ամփոփված չէ: Հարկ է նշել, որ քոլեջի տարեկան հաշվետվությունները տեղեկատվական բնույթի են, որակական և քանակական վերլուծությունների հիմքով ամփոփումներ չեն ներառում:

Անդրադառնալով կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության հրապարակմանը՝ կարելի է նշել, որ քոլեջի շրջանավարտների շրջանում հարցումներ է իրականացնում կարիերայի կենտրոնը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2022-2023 ուստարում հացումներ են իրականցվել շրջանավարտների և գործատուների շրջանում, որոնց արդյունքներով ՄԿԾ-ներում բարելավումներ դեռևս չեն իրականացվել:

Քոլեջի կայքէջում տեղադրված է տեղեկատվություն կրթական ծրագրերի իրականացման մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հրապարակվող տեղեկատվության գնահատում դեռևս չի իրականացվել: Կայքէջի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը հրապարակել է նաև որոշ անվանի երաժիշների և կատարողների մասին տեղեկատվություն, որոնք հանդիսանում են տարբեր տարիների քոլեջի շրջանավարտներ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ հաջողության պատմությունների մասին իրազեկման աշխատանքները դեռևս լայնածավալ կերպով չեն իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը մշակել է կառավարչական գործընթացների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթային հենքը, ինչը նպաստել է վարչարարության գործընթացների որոշակի կանոնակարգմանը: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ Մանկավարժական, Տնօրինական, Ուսումնամեթոդական խորհուրդների կողմից դուրս բերված կարևոր խնդիրների ու դրանց հիմքով իրականացված բարելավումների ամփոփումը հաշվետվություններում, ԿԽ-ում դրանց քննարկումը կնպաստեն կառավարչական գործընթացների արդյունավետությանը: Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ քոլեջի հաստատած կազմակերպական կառուցվածքի և գործող կառուցվածքի համապատասխանեցումը հնարավորություն կտա խուսափել առկա հաստիքների գործառութային համընկնումներից՝ նպաստելով կառավարման հիեարխիկ կապերի արդյունավետ գործարկմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը պետական դրամաշնորհների և ուսանողների վարձավճարների հաշվին կարողանում է ֆինանսավորել իր ընթացիկ ծախսերը, ուր գերակշռում է աշխատավարձի ծախսային հոդվածը, այդուհանդերձ ընթացիկ ծախսերի ֆինանսավորումից հետո 5% կազմող ազատված դրամական միջոցները բավարար չեն քոլեջի ՌԾ-ով սահմանված առաջնային խնդիրները ֆինանսավորելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի ուշադրություն դարձնելու այս հանգամանքին, քանի որ բյուջեի մուտքերի նման բաշխվածության պարագայում կարող է վտանգվել քոլեջի հետագա զարգացումը:

Մտահոգիչ է, որ քոլեջին դեռևս չի հաջողվել ապահովել ֆինանսական կայունությունը, մասնավորաբար՝ նոր մասնագիտությունների ներդրման, ձեռնարկատիրական գործունեության ծավալման, նախաձեռնությունների ֆինանսավորման մոդելի գործարկման հարցում արդյունքներ չեն արձանագրվել: Նշյալի համատեքստում ֆինանսական կայունության ցուցանիշները հաշվարկված և վերլուծված չեն, ուստի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ներգրավումը և ռազմավարական նպատակների իրականացմանը համընթաց ֆինանսավորման նոր մոդելների մշակումն ու կիրառումը հրատապ խնդիր են քոլեջի արդյունավետ ֆինանսական կառավարման համար: Հավելելով՝ հարկ է նշել, որ քոլեջի կողմից ծախսարդյունավետության գնահատումների իրականացումն անհրաժեշտ է դնել պլանային բյուջեի կազմման հիմքում, ինչպես նաև գնահատել երկարաժամկետ հեռանկարում ներդրված միջոցներից սպասվելիք արդյունքները,

ինչը կարող է նպաստել ռազմավարական կառավարմանը: Կառավարման համակարգի արդյունավետության և ծառայությունների որակի բարձրացման ապահովման համատեքստում քոլեջի կողմից հստակ և չափելի ցուցիչների սահմանումը կարող է նպաստել արդյունքների վերաբերյալ գնահատումների հիմնավորության բարձրացմանը և հիմք դառնալ բարելավման գործընթացների իրականացման համար:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ դասախոսներն ու ուսանողներն իրենց մասնակցությունն ունեն Կառավարման խորհրդի գործունեությանը՝ մասնակցելով նիստերին, քվեարկություններին, և նրանց նախաձեռնողականության խթանումը քոլեջի կառավարչական գործընթացներին ու իրենց առնչվող որոշումների կայացմանը կարող է օժանդակել քոլեջի գործունեության շրջանակում ներքին շահակիցների մասնակցային կառավարմանը:

Դրական է, որ ՌԾ-ի կատարման հիմքում դրված են քոլեջի տարեկան և կիսամյակային աշխատանքային պլանները, սակայն փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ ամբիոնների կիսամյակային աշխատանքային պլանները չեն ներառում նախորդ ուստարվա արդյունքներով դուրսբերված խնդիրների բարելավման գործողությունները, ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու դրանց համապատասխան հաշվետվությունները պլան-կատարողական կապի մեջ համադրելի չեն, ստորաբաժանումների գործունեության արդյունավետության հստակ ցուցիչներ սահմանված չեն, որոնցով հնարավոր կլիներ գնահատել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը: Հարկ է նշել, որ արդյունքային վերլուծությունների հիմքով հաշվետվությունների առկայությունը հնարավորություն կտա վեր հանել քոլեջի գործունեության առանցքային խնդիրները և ռազմավակարական կառավարման գործընթացներն իրականացնել կարճաժամկետ ու միջնաժամկետ պլանավորումների գնահատման հիման վրա:

Փորձագիտական խումբը դրական է դիտարկում, որ քոլեջը դասակարգել է իր գործունեության վրա ազդող արտաքին գործոնները: Փորձագիտական խմբի գնահատմամբ ներքին գործոնների դասակարգումը և ուսումնասիրությունը կնպաստի ներքին միջավայրի կարիքների վերհանմանը և կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը: Որոշումների կայացման արդյունավետության բարձրացման համար փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարիք ունի մշակելու և ներդնելու գործունեության ինչպես արտաքին ռիսկերի, այնպես էլ ներքին ռիսկերի գնահատման և կառավարման մեխանիզմներ: Փորձագիտական խմբի գնահատմամբ քոլեջում առավելապես գործում է իրավիճակային կառավարման մոդելը, և երկարաժամկետ կառավարման գործիքները դեռևս ներդրված չեն: Ուստի կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ինստիտուցիոնալ մակարդակում ներդնել կառավարման առավել արդյունավետ մոդելներ: Կառավարման մարմինները համագործակցում են որակի ապահովման պատասխանատուների հետ, այդուհանդերձ հավաստի տվյալների հիմքով տեղի ունեցած փոփոխությունների օրինակներ առկա չեն: Քոլեջը կարիք ունի գնահատելու կիրառվող գործիքների արդյունավետությունը,

հստակ սահմանելու դրանցից ակնկալվող արդյունքները, ինչը կնպաստի տվյալահենք որոշումների կայացմանը:

Որակի կառավարման սկզբունքի լիարժեք կիրառման տեսանկյունից խնդրահարույց է, որ քոլեջի կառավարման տիրույթը դեռևս պլանավորում-իրականացում շրջափուլում է, և գնահատում-բարելավում շրջափուլը դեռևս ամփոփված չէ: Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական կիրառումը կառավարման և վարչարարության գործընթացներում կնպաստի քոլեջի տարեկան հաշվետվություններով ընթացիկ տարվա կրթական գործընթացների իրականացման հիմնական ուղղությունների հստակեցմանը, դրանց համեմատական վերլուծությունների իրականացմանը, ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրմանը: Արդյունքում, կապակցելով գնահատման և բարելավման գործընթացները՝ հիմքեր կստեղծվեն հաջորդ շրջափուլում պլանավորման արդյունավետության բարձրացման համար:

Դրական հանգամանք է, որ քոլեջը նախաձեռնել է շրջանավարտների և գործատուների կարիքների վերհանման գործընթացը, սակայն փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև դրանց հիմքով ՄԿԾ-ների բարելավումների իրականացումը, շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության հրապարակման գործընթացների լավարկումը, ինչը կնպաստի քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի մասին հասարակության առավել լայն շերտերի շրջանում իրազեկվածության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ռազմավարական կառավարումն արդյունավետորեն չի իրականացվում, ներքին և արտաքին ռիսկերի կառավարման գործիքներ չեն գործարկվում, ներքին և արտաքին շահակիցների կարիքներն ամփոփված չեն ներդրվում որոշումների կայացման հիմքում, փոփոխությունների կառավարման համատեքստում քոլեջը կիրառում է իրավիճակային կառավարման մոդելը, ֆինանսական ռեսուրսները բավարար չեն քոլեջի առաջնահերթություն հանդիսացող ոլորտների համաչափ զարգացման համար, որակի ապահովման համակարգի վերհանած տվյալները հիմնականում չեն դրվում կառավարչական որոշումների կայացման հիմքում, որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ամբողջությամբ չի կիրառվում և չի ապահովում կառավարման գործընթացների կայուն իրականացումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջն իրականացնում է 4 միջին մասնագիտական կրթության կրթական ծրագիր՝ «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ (դաշնամուր, լարային, փողային և հարվածային, ժողովրդական գործիքներ մասնագիտացումներով)», «Երգչախմբավարություն», «Երգեցողություն», «Երաժշտության տեսություն»: Քոլեջը նույն ուղղություններով իրականացնում է նաև կարճաժամկետ դասընթացներ: Մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի առաքելությանը և իրենց կառուցվածքով, մոդուլների հաջորդականությամբ համապատասխանում են ՊԿՉ-ներին: Քոլեջի ներկայացուցիչները ընդգրկված են եղել «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ (4 մասնագիտացմամբ)», «Երգչախմբավարություն», «Երգեցողություն» մասնագիտությունների ՊԿՉ-ների և դրանց օրինակելի մոդուլային ծրագրերի մշակման աշխատանքային խմբերում: Հարկ է նշել, որ դրանք փորձարարական կերպով ներդրվել և իրականացվել են քոլեջում: Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ներում կամընտրական և նախասիրական առարկաներ ներդրված չեն: Քոլեջում ուսանողները հնարավորություն ունեն ընտրել անհատական ուսուցման մասնագիտական դասախոսին: Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ դասախոսները կազմում են ուսանողների անհատական ուսումնառության պլաններ, որոնք միևնույն դասախոսի կողմից երբեմն նույնական բովանդակությամբ են լրացվում և չեն արտացոլում ուսանողների առանձնահատկությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների կիսամյակային կատարողական ծրագրերը թարմացվում են, ինչպես օրինակ «Երգչախմբավարություն» կրթական ծրագրի դեպքում, թարմացվել է ծրագիրը: Այցից պարզ դարձավ նաև, որ երբեմն սոլֆեջիոյի վատ իմացությամբ ուսանողներ են ընդունվում քոլեջ, որի դեպքում դասախոսները լրացուցիչ աշխատանքներ են կատարում վերջնարդյունքների ապահովման նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Երգեցողություն» մասնագիտությունում օտար լեզուների՝ իտալերենի, ազլերենի, գերմաներենի, ֆրանսերենի իմացության կարիք կա, սակայն կրթական ծրագրերում այս նպատակով փոփոխություններ չեն իրականացվել:

ՊԿՉ-ների տեղայնացման համատեքստում քոլեջը փորձել է որոշակի փոփոխություններ իրականացնել դասավանդվող մոդուլների ժամաքանակում, ինչպես օրինակ 20-րդ դարի երաժշտական գրականության ժամաքանակն ավելացել էր, ռուսականը՝ կրճատվել: Այնուհետև գնահատելով իրականացված փոփոխության արդյունավետությունը՝ քոլեջը որոշում է կայացրել այն ներառելու արտասահմանյան երաժշտական գրականության շրջանակներում: Դիտարկելով կրթական ծրագրերի կառուցվածքը՝ պարզ է դառնում, որ դասավանդվող առարկաներն ու մոդուլներն իրենց բովանդակությամբ և դասախոսների

կողմից տրամադրվող առաջադրանքները փոխլրացնում են միմյանց։ Այսպես օրինակ, սոլֆեջիոն և երաժշտության տեսությունը պատրաստում են հարմոնիայի դասընթացի յուրացմանը, որն ուսանողներն անցնում են երրորդ կուրսում։ Հարկ է նշել, որ «Երգեցողություն» կրթական ծրագրում առաջադրանքներն ընտրելիս դասախոսները հաշվի են առնում նաև ուսանողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված ձայնի մուտացիոն շրջանը՝ ըստ դրա աշխատում յուրաքանչյուր ուսանողի հետ միջին ռեգիստրում եղած ստեղծագործություններն ընտրելով, որ կոկորդը և ձայնալարերը տրավմայի չենթարկվեն։ Այս առանձնահատկությունները հաշվի են առնվում նաև ձայնավարժությունները կատարելիս։ Կրթական ծրագրերի վերջնարդյունքների պլանավորման համար քոլեջը կարևորում է, որ դրանք լինեն նախահիմք Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ընդունելության շեմը հաղթահարելու համար. այց ցուցանիշը մրցույթների, փառատոնների մասնակցության հետ մեկտեղ քոլեջը դիտարկում է որպես շրջանավարտի հաջողության չափանիշ։

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն առկա չէ քոլեջում։ Դասախոսներն ունեն դասավանդման իրենց անհատական մոտեցումները՝ ելնելով ուսանողների առանձնահատկություններից։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդման մեթոդներն ընտրելիս հաշվի են առնվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների առանձնահատկությունները։ Հարկ է նշել, որ նման առանձնահատկություն ունեցող ուսանողների համար առանձին ծրագրեր մշակված չեն։ Նրանց ուսումնառությունը կազմակերպվում է ներառականության սկզբունքով՝ փորձելով հանձնարարականների կատարումն ապահովել նաև ծնողների ներգրավման միջոցով։

«Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» ՄԿԾ-ի Դաշնամուր մասնագիտացման վերջնարդյունքները ներկայացված են ուսումնառության արդյունք-դասավանդման մեթոդ-ուսումնառության մեթոդ կապի մեջ, ուր առանձնացված են Դաշնամուր մասնագիտացման վերջնարդյունքները, դրանց համարժեք դասավանդման մեթոդներն ու ուսումնառության մեթոդները։ Հարկ է նշել, որ դասավանդման մեթոդներն ու ուսումնառության մեթոդները տարբերակված չեն, նույնական են՝ երկուստեք ներկայացվել են տեսական և գործնական ուսուցման եղանակները (տեսական և գործնական ուսուցման եղանակները հստակեցված չեն)։ Բացի այդ, բոլոր ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար սահմանվել են միևնույն դասավանդման և ուսումնառության մեթոդները։ Վերջնարդյունքներում մանկավարժական հմտություններն և կարողությունները ևս շեշտադրված են, սակայն ներկայացված ուսումանառության մեթոդներն առավել ընդհանրական են, ներկայացված և տարանջատված չեն մանկավարժական կարողությունների ձեռքբերման համար։ Դիտարկվող կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առաջադրանքները հստակորեն տարանջատված չեն՝ ըստ մոդուլների։ Բացի այդ, առանձնացված չեն տեսական և գործնական ուսուցման եղանակներին համարժեք առաջադրանքները։ Շատ հաճախ դասախոսները առաջադրանքները բանավոր են տրամադրում ուսանողներին։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների անհատական ծրագրերը կազմելիս քոլեջում առաջնորդվում են աստիճանական բարդացման սկզբունքով՝ ծրագրերն աստիճանաբար բարդացնելով, նաև հաշվի առնելով ուսանողների անհատական ունակությունները: Մասնավորապես, մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ, օրինակ «Երգչախմբավարություն» կրթական ծրագրի պարագայում դասախոսը, հաշվի առնելով ուսանողների մասնագիտական կարողությունները և իմացական մակարդակը, հանձնարարում է պարզից բարդ առաջադրանքներ՝ ներառելով նաև ժամանակակից ստեղծագործություններ, ինչպես օրինակ՝ Բենջամեն Բրիտտեն: «Երգչախմբավարություն» ՄԿԾ-ում նորարարության խթանման համար կիրառում են նաև երգչախմբավարության ժամանակակից մոտեցումներ, ինչպես օրինակ մեկնաբանել Կոմիտասը պարային շարժումերով կամ ղեկավարել երգչախումբը առանց ձեռքերի կիրառման՝ հնարավորություն տալով ուսանողներին ազատ դրսևորվելու:

Փորձաքննության ընթացքում իրականացված դասալսումներից պարզ դարձավ նաև, որ «Երգեցողություն» կրթական ծրագրում կարևորում են շնչառության ճիշտ իրականացումը, ձայնածավալի մեծացումը, լսողության վարժությունների կատարումը, ձայնատարության ամրապնդումը վարժությունների միջոցով, ինչպես նաև ուշադրություն են դարձնում բեմական կատարողական արվեստին: «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» մասնագիտության ուսանողները կարող են նաև կատարել իրենց նախընտրելի ստեղծագործությունները: Եթե դրանք ծրագրային չեն կամ տվյալ ժամանակահատվածում բարդ են ծրագրում ներառվելու համար, ապա դասախոսները ծրագրային ստեղծագործությունների հետ զուգահեռ դրանց վրա ևս աշխատում են ուսանողների հետ՝ մոտիվացնելով նրանց: Երբեմն գործընկեր դասախոսները լսում են միմյանց ուսանողների կատարումները, որոշակի խորհրդատվություններ տրամադրում նրանց:

Քոլեջում տարին 4 անգամ կազմակերպվում են «Փակ երեկոներ», որի ընթացքում ուսանողները ցուցադրում են իրենց կատարողական հմտությունները՝ կատարելով գամմաներ, էտյուդներ:

Կատարողական հմտությունների ձեռքբերման համար ուսանողները հնարավորություն են ունենում դիտարկելու դասախոսի կողմից ցուցադրումը՝ կիրառելով մատների վարժանքներ, անցումներ, տարբեր տեխնիկաներ: Քոլեջում առկա է նաև մասնագիտական գրականություն, օրինակ՝ գրադարանում կան էտյուդների, վարժությունների ձեռնարկներ, ուր մանրամասնորեն նկարագրված են երաժշտական տեխնիկական շտրիխները: Դրանք հանձնարարվում են ուսանողներին, սակայն երկուստեք առավել նախընտրելի է ցուցադրությամբ սովորեցնելն ու սովորելը: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ դասավանդման գործընթացում դասախոսները կիրառում են նաև հակառակ մեթոդաբանությունը, երբ դասախոսը ցույց է տալիս նախ սխալները, թե ինչպես չպետք է աշխատեն օրինակ օրկեստրի հետ, կամ կերպարային ինչ սխալներ չպետք է իրականացնեն: Քոլեջը փորձում է խթանել նաև ուսանողների ստեղծագործականությունը: Կարելի է առանձնացնել այն օրինակը, որ ջութակի դասախոսը հանձնարարել է իր ուսանողներին էտյուդ գրել՝ կիրառելով նախապես սովորած տեխնիկան, համադրելով

ձեռքբերված հմտությունները: Երգչախմբավարություն կրթական ծրագրի ուսանողներին երբեմն հնարավորություն է տրվում հանձնարարված առաջադրանքի շրջանակներում ներմուծել խմբի հետ աշխատելու նոր մոտեցումներ՝ կախված ուսանողի առանձնահատկություններից, ինչպես նաև գիտելիքի մակարդակից: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ կրթական ծրագրերում այս բնույթի առաջադրանքները դեռևս հստակորեն առանձնացված չեն և պայմանավորված են դասախոսի ընտրությամբ:

Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ, չնայած ուսանողներն ուսումնասիրում են Համակարգչային օպերատորություն մոդուլը, այսուհանդերձ համակարգչային ծրագրերի կիրառմամբ նոտագրման, երաժշտության մշակման և այլ հմտությունները դեռևս զարգացած չեն:

Քոլեջն ունի 2018 թվականին հաստատված «Ուսանողների գիտելիքների և կարողությունների ստուգման և գնահատման քաղաքականություն և ընթացակարգ», որտեղ առանձնացված են քաղաքականության նպատակները, սկզբունքները, նախանշված է գնահատման նպատակը: Քաղաքականությամբ կարևորվում է ուսանողի կատարողականի չափումը՝ գնահատման սանդղակի միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման սանդղակները կիրառվում են սոլֆեջիոյի և հարմոնիայի դեպքում, այլ դասընթացների պարագայում գնահատման ռուբրիկներ առանձնացված չեն:

Գնահատման քաղաքականությունը սահմանում է նաև գնահատման արդյունքների բողոքարկում, սակայն բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որևէ մասնագիտության համար արդյունքի ձեռքբերման գնահատման թերթիկներ /checklist/ չեն կիրառվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատման մեթոդաբանության ընտրության մեխանիզմները տարբերվում են՝ կախված դասախոսի մոտեցումներից: Դասալսումներից և մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսն անընդհատ աշխատում է ուսանողի հետ, հետադարձ կապ ապահովում, շտկում ընթացիկ սխալները, այսուհանդերձ գնահատվում է վերջնական արդյունքը՝ կատարումը:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ սոլֆեջիոյի համար կան առանձնացված թելադրության չափորոշիչներ, որտեղ 11 կետով առանձնացված են հնարավոր սխալները իրենց համարժեք միավորներով և հարմոնիայի խնդրի մեղեդու կամ բասի ներդաշնակման սխալները, որտեղ ընգրկված են դասագրքային սահմանումներով ձևակերպված անթույլատրելի սխալները, ինչպես օրինակ մեղեդու սխալ տոնայնության որոշում, ակորդի սխալ դասավորություն, սխալ հաջորդականություն, նոտագրության ուղղագրական սխալներ, նշանների սխալներ և այլն: Մյուս դասընթացների շրջանակում դասախոսներն իրենք են ընտրում գնահատման մեթոդները: Հարկ է նշել, որ հետազոտական աշխատանքի գնահատման հստակ սանդղակներ քոլեջում ևս դեռևս ներդրված չեն:

Պրակտիկաներն իրականացվում են երրորդ և չորրորդ կուրսերում: Հաշվի առնելով, որ ուսանողները ստանում են նաև դասավանդողի որակավորում և հնարավորություն են ունենում աշխատելու երաժշտական և արվեստի դպրոցներում, ուսանողներն անցնում են մանկավարժական պրակտիկաներ: Բացառություն է կազմում Երգչախմբավարություն մասնագիտությունը, որի դեպքում ուսանողներն անցնում են միայն կատարողական

պրակտիկա։ Քոլեջը համագործակցության համաձայնագրեր ունի Երևան քաղաքի 6 հաստատությունների հետ (Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց, Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոց, Ղ. Սարյանի անվան արվեստի թիվ 1 դպրոց, Ա. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց, Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոց, Ա. Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոց)՝ ուսանողական պրակտիկաների անցկացման մասով: Առկա է պրակտիկայի ընդհանրական ծրագիր, որը սակայն առանձնացված չէ ըստ հստակ կատարվող հաջորդական փուլերի։ Հարկ է նշել, որ պրակտիկայի օրագրեր և հաշվետվություններ առկա չեն։ Ուսանողների պորտֆոլիոներ ևս առկա չեն։ Պրակտիկայի գնահատման առանձին չափանիշներ չկան։ Պրակտիկաները գնահատում են քոլեջի դասախոսները։ Պրակտիկաների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը և գնահատականները ամփոփվում են դասամատյաններում։ Հարկ է նշել, որ դիտարկվող կրթական ծրագրերի համար նախատեսված ՊԿՉ-ների մասնագիտական գործունեության բնութագրերով սահմանված զբաղմունքի նկարագրերը բազմազան են, ինչպես օրինակ՝ երաժշտական գործիքի կատարող, կամերային համույթի կատարող, երաժշտական գործիքի կատարողական արվեստի դասավանդող, նվագակցող, երգիչ-կատարող, համույթային երգիչ, երգչախմբային երգիչ, երգչախմբի ղեկավար, ղեկավար երաժշտական կոլեկտիվի և այլն։ Զբաղմունքի նկարագրերով առանձնացված այլ վայրերի հետ պրակտիկայի իրականացման համար պայմանագրեր նախատեսված չեն, ինչպես օրինակ համույթներ, երգչախմբեր, այլ մասնավոր հաստատություններ։ Երգեցողության բաժնի ուսանողները իրենց պրակտիկ հմտությունները զարգացնում են նաև քոլեջում գործող համույթում և երգչախմբում, ինչպես նաև երաժշտական դպրոցներում, որը դարձյալ զուգորդվում է մանկավարժական պրակտիկայի հետ։

Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է նախօրոք կազմված և հաստատված հարցաշարերի հիման վրա, որոնք տարեսկզբին արդեն տրվում են ուսանողներին։ Հարցաշարերը մշակվում են ծրագրերում ընդգրկված քննական հարցերից։ Փորձագիտական ոսուումնասիրություններից և հարցաշարերի դիտարկումից պարզ դարձավ, որ ամփոփիչ ատեստավորման քննություններում շեշտադրվում են ուսանողների կատարողական հմտությունների գնահատումը, և չեն շեշտադրվում մանկավարժական կարողությունների ստուգումը։ Մասնավորապես, դիտարկվող 3 ՄԿԾ-ների 2021-2022 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման ծրագրային չափանիշներով առանձնացված են հետևյալ կետերը՝ խոշոր կտավի ստեղծագործություն, պոլիֆոնիկ ստեղծագործություն, համերգային էտյուդ, պիես, ակադեմիական երգեցողություն, ժողովրդական երգեցողություն, էստրադային երգեցողություն, ղեկավարել ուսանողական երգչախմբով 2 ստեղծագործություն՝ a capella, նվագակցությամբ։

Անդրադառնալով կրթական ծրագրերի համեմատական վերլուծությանը՝ հարկ է նշել, որ քոլեջի կրթական ծարգրերը կազմված են ՊԿՉ-ների հիման վրա։ ՀՀ որոշ նմանատիպ քոլեջների ՄԿԾ-ների հետ իրականացվել են բովանդակային համադրություններ, օրինակ՝ Արմավիրի արվեստի պետական քոլեջ, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ։ Քոլեջն իր լավագույն փորձը կիսել է նաև Վանաձորի, Իջևանի և մի շարք

այլ մարզային երաժշտական դպրոցներում՝ ներկայացնելով դասավանդման իր մոտեցումներն այս կամ այն երաժշտական ուղղության վերաբերյալ: ՄԿԾ-ների համեմատությունների առցանց քննարկումներ են իրականացվել նաև միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես օրինակ Գնեսինների անվան երաժշտական քոլեջ, Տարտուի Հ. Էլլերի անվան երաժշտական քոլեջ, Ուֆայի Զագիր Իսմագիլովի անվան արվեստի պետական ինստիտուտ և այլն: Նշյալ ուսումնական հաստատությունների հետ իրականացված համեմատական վերլուծությունները փաստաղթային արտահայտություն չեն ստացել: Քոլեջի դասախոսներն ու ուսանողները շարժունության ծրագրերի դեռևս չեն մասնակցել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը կրթական ծրագրերի վերաբերյալ քննարկումներ է իրականացնում Հանրապետության արվեստի քոլեջների հետ: Դիլիջանի, Կապանի, Գյումրու, Վանաձորի քոլեջների հետ իրականացվել են քննարկումներ՝ ծրագրերի մասնագիտական բովանդակության, ծրագրային պահանջների համադրելիության համահունչ լինելու առումով: Կատարվում է փաստաթղթային մասի ուսումնասիրություն, քննարկումներ հաստատությունների ներկայացուցիչների հետ, ուսանողների կատարումների փոխադարձ ունկնդրումներ:

2022-2023 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունների դիտարկմամբ որոշ խնդիրներ են վերհանվել, ինչպես օրինակ՝ ծրագրերում պարտադիր ներառել հայ կոմպոզիտորների, կոմպոզիտորական և հոգևոր ստեղծագործությունների կատարման մեջ հետևել և հավատարիմ մնալ նոտայի տեքստի տարրին, համույթներում ուսանողը քննվող ելույթով հանդես գա՝ թե՛ որպես մենակատար, թե՛ որպես նվագակցող և այլ խնդիրներ: Քննության արձանագրությունների համաձայն՝ հանձնաժողովի կողմից քննության ընթացքում գնահատվում է դասախոսի աշխատանքը՝ հաշվի առելով խմբի պատրաստվածության ընդհանուր մակարդակը: 2022-2023 ուտարվա արձանագրություններով ուշադրության են արժանի հետևյալ խնդիրները՝ ուսանողների բանավոր պատասխանների ընդհանուր մակարդակը, ծրագրի թերի յուրացվածության աստիճանը, ուսանողների վերլուծական կարողությունների բացահայտման մեթոդների բացակայությունը, գնահատման համար հիմք ընդունել ոչ միայն ուսանողի պատրաստվածությունը քննությանը, այլև կիսամյակային հաճախումներն ու ակտիվությունը, երաժշտական համարները երգելու, դրանք յուրացնելու և ընկալելու ուսանողների թերացումները և այլ առանցքային խնդիրներ: Ամփոփիչ ատեստավորման հաշվետվություններով ու քննությունների արձանագրություններով դուրսբերված խնդիրները քոլեջում քննարկվում են բանավոր մակարդակում և դրանց՝ հաջորդ տարվա աշխատանքային պլաններում ներառելու մեխանիզմները հստակ չեն գործում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաշվի առնելով վերջին տարվա ընդունելության արդյունքները՝ քոլեջի համար առավել շահեկան դիրքերում են «Երգեցողություն» ՄԿԾ-ն և «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» ՄԿԾ-ի Ժողովրդական գործիքներ մասնագիտացումը: Հարկ է նշել, որ դհոլի բաժինը մեծ պահանջարկ ունի և ամբողջությամբ գործում է վճարովի հիմքերով: Փողային և հարվածային գործիքների մասնագիտացմամբ ևս որոշակիորեն ավելացել է ընդունելությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում իրականցվող միջին մասնագիտական 4 կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի առաքելությանը և ՊԿՉ-ներին՝ նպաստելով երաժշտության ոլորտի մասնագետների պատրաստմանը և աշխատաշուկայի սպասարկմանը: Գովելի է, որ քոլեջի ներկայացուցիչները մասնակցություն են ունեցել 3 մասնագիտությունների ՊԿՉ-ների և դրանց մոդուլային ծրագրերի կազմմանը, որոնք փորձարկվել են քոլեջում և խթանել մոդուլային ուսուցման ներդրումն ու իրագործումը:

Դրական է, որ քոլեջը սահմանել է իր շրջանավարտի հաջողության չափանիշները, որի շրջանակում քոլեջը մեծ կարևորություն է տալիս այն հանգամանքին, որ կրթական ծրագրերի վերջնարդյունքները հիմք լինեն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ընդունելության համար, և քոլեջի ուսանողները պարբերաբար մասնակցեն մրցույթների, փառատոնների և զբաղեցնեն մրցանակային տեղեր: Նշյալն անխոս դրականորեն է անդրադառնում քոլեջի դրական վարկանիշի և կրթական ծրագրերի գրավչության բարձրացման վրա: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ երաժշտության ոլորտի աշխատաշուկայի արագ սպասարկման տեսանկյունից քոլեջը որոշակի աշխատանքներ իրականցնելու կարիք ունի՝ նպաստելով ոչ միայն շրջանավարտների՝ կրթական հաջորդ մակարդակում կրթության շարունակականության ապահովմանը, այլ նաև նրանց աշխատանքի տեղավորմանը ոլորտային կառույցներում, երաժշտական հաստատություններում:

Քոլեջի դասախոսներն ունեն անհատական դասավանդման մոտեցումներ, որոնց հիմքում դրված է ուսանողների առանձնահատկությունները: Գովելի է, որ դասախոսները դասավանդման մեթոդներն ընտրելիս հաշվի են առնում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների առանձնահատկությունները՝ պահպանելով ներառականության սկզբունքը և նպաստելով ուսանողակենտրոն ուսուցմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը մեկ մասնագիտության գծով փորձել է վերջնարդյունքները ներկայացնել ուսումնառության արդյունք-դասավանդման մեթոդ-ուսումնառության մեթոդ շղթայի շրջանակում, սակայն դասավանդման մեթոդներն ու ուսումնառության մեթոդները տարբերակված չեն և բոլոր ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար սահմանվել են միևնույն դասավանդման և ուսումնառության մեթոդները: Նշյալ շղթայի արդյունավետ գործարկման տեսանկյունից նպատակահարմար է ըստ վերջնարդյունքների հստակ տարանջատել դասավանդման և ուսումնառության մեթոդները, յուրաքանչյուր մոդուլի համար առանձնացնել տեսական և գործնական ուսուցման եղանակներին համարժեք առաջադրանքները, որոնք միասնության մեջ կարող են օժանդակել արդյունավետ դասավանդմանը և նպաստել կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերմանը;

Գնահատելի է, որ քոլեջը մեծ ուշադրություն է դարձնում ուսանողների կատարողական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, ստեղծագործականության զարգացմանը, որի համար կիրառվում են տարբեր մեթոդներ, կատարողական տեխնիկաներ,

տրամադրվում տարբեր առաջադրանքներ, բացի այդ ուսանողներին հնարավորություն է ընձեռվում «Փակ երեկոներ»-ին ցուցադրելու իրենց կատարողական հմտությունները, որոնք նպաստում են կատարողական արվեստի ձևավորմանը: Փորձագիտական խումբը նշում է, որ ՄԿԾ-ներում առաջադրանքների պարտադիր բաղադրիչի ներդրումն ու արտացոլումը և դրանց դասակարգումն ըստ տեսական, գործնական բաղադրիչների կարող է էապես բարձրացնել ՄԿԾ-ների արդյունավետությունը:

Դրական արձանագրում է, որ քոլեջը մշակել է գնահատման քաղաքականություն՝ առանձնացված նպատակներով և սկզբունքներով, ներկայացված գնահատման սանդղակով, որը կիրառվում է միայն սոլֆեջիոյի և հարմոնիայի դեպքում, իսկ դրանց կիրառումը բոլոր մոդուլների պարագայում կարող է նպաստել գնահատման համակարգի արդյունավետության բարձրացմանը, ուսանողի հետագծի առավել հստակ պլանավորմանը: Հատկանաշական է, որ, կախված դասախոսի մոտեցումներից, գնահատման մեթոդները տարբեր են, ուստի գնահատման միասնական հարթակ ձևավորելու համար նպատակահարմար է, որ քոլեջը բոլոր դասընթացների և մոդուլների համար մշակի առանձին գնահատման ռուբրիկներ: Բացի այդ, ամփոփիչ ատեստավորման քննություններում շեշտադրվում է ուսանողների կատարողական հմտությունների գնահատումը, մանկավարժական կարողությունների ստուգումը շեշտադրված չէ, ինչը կարող է խոչընդոտել վերջնական հմտությունների և կարողությունների համապարփակ և արդյունավետ գնահատմանը:

Ամփոփելով քոլեջում բացահայտված հաջողված փորձերն ու լավ օրինակները, որոնք նպաստել են ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը՝ փորձագիտական խումբն առանձնացնում է հետևյալները՝ ուսանողները հնարավորություն ունեն ընտրել անհատական ուսուցման մասնագիտական դասախոսին, ուսանողների կիսամյակային կատարողական ծրագրերը թարմացվում են, նրանց հետ դասախոսները լրացուցիչ աշխատանքներ են կատարում վերջնարդյունքների ապահովման նպատակով, առաջադրանքներն ընտրելիս դասախոսները հաշվի են առնում ուսանողների առանձնահատկությունները և այլն: Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի կառավարման գործընթացի հստակեցումը, ծրագրերի պլանավորման գործընթացի լավարկումը մեծապես կարող են նպաստել քոլեջում առանձին մակարդակներում առկա ներքին լավագույն փորձի տարածմանը և դրանց ներդրմանն ինստիտուցիոնալ մակարդակում:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջը պրակտիկաների համագործակցություններ ունի միայն երաժշտական դպրոցների հետ, մինչդեռ դիտարկվող կրթական ծրագրերի համար նախատեսված ՊԿՉ-ների մասնագիտական գործունեության բնութագրերով սահմանված զբաղմունքի նկարագրերը բազմազան են, և զբաղմունքի նկարագրերով առանձնացված այլ վայրերի հետ պրակտիկայի իրականացման համար պայմանագրեր նախատեսված չեն: Դրանց առկայության պայմաններում կընդլայնվի ուսանողների շփման և կատարողական հմտություններ ձեռքբերելու մասնագիտական հարթակը: Փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկաների արդյունավետ կազմակերպման և իրականացման տեսանկյունից քոլեջն աշխատանքներ ունի

իրականացնելու, որի արդյունքում կբարելավվի մանկավարժական և կատարողական պրակտիկան, ինչը կնպաստի ուսանողների մրցունակության բարձրացմանը։

Ողջունելի է, որ տեղական մակարդակում նմանատիպ քոլեջների ՄԿԾ-ների հետ իրականացվել են բովանդակային համադրություններ, արվեստի քոլեջների հետ՝ կրթական ծրագրերի վերաբերյալ քննարկումներ, քոլեջն իր հաջողված փորձը ներկայացրել է մարզային երաժշտական դպրոցներում, որի արդյունքում բարձրացել է քոլեջի կրթական ծրագրերի գրավչությունը։ Հավելելով՝ ՄԿԾ-ների համեմատությունների առցանց քննարկումներ են իրականացվել նաև միջազգային երաժշտական հաստատությունների հետ, սակայն դրանց հիմքով ՄԿԾ-ներում բարելավումներ չեն իրականացվել, ինչը կարող էր նպաստել նաև ուսանողների շարժունության համար հնարավորությունների ստեղծմանը։

Անդրադառնալով քոլեջի շահեկան մասնագիտություններին՝ հարկ է նշել, որ դրանք դիտարկվել են ըստ վերջին տարիների ընդունելության արդյունքների, և գովելի է, որ քոլեջն առանձնացրել է իր բարձր պահանջարկ ունեցող մասնագիտություններն ու նրանց բաժինները։ Միևնույն ժամանակ մեծ է քոլեջի դերակատարումը ավելի քիչ գրավչություն ապահովող մասնագիտությունների գործարկման գործում՝ փորձելու համապատասխան կարողություններ ունեցող տեսաբաններով ապահովել աշխատաշուկան։

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից կրթական ծրագրերի գնահատման և մշտադիտարկման մեխանզիմների պարբերական և արդյունավետության հստակ ցուցիչների սահմանմանբ կիրառումը կարող է հանգեցնել առաջանցիկ կրթության տրամադրմանը՝ վերհանելով ուսանողների ու գործատուների պահանջները և դրանց հիման վրա շարունակաբար լավարկելով կրթական ծրագրերը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի մասնագիտական կրթական ծրագրերը համապատասխանում են սահմանված առաքելությանը, պետական կրթական չափորոշիչներին, դասավանդման գործընթացում կիրառվում են տարաբնույթ մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցմանը, առկա են դասավանդման և ուսումառության հաջողված փորձեր, ներդրվել են գնահատման որոշ գործիքներ, կրթական ծրագրերի իրականացումը նպաստում է ուսանողների մասնագիտական կարողությունների և վերջնարդյունքների ձևավորմանը, ուսումնառության գործընթացը նպաստում է մասնագիտական մտածողության զարգացմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները։

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ուսանողների ընդունելությունն իրականացվում է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի և ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի համապատասխան՝ մրցութային կարգով: Քոլեջի կրթական ծրագրերը, երաժշտական կրթության տրամադրման առանձնահատկություններով պայմանավորված, իրականացվում են միայն առկա կրթաձևով, հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրեր չեն իրականացվում: Գործող կարգին համապատասխան ընդունելության քննությունները (ըստ մասնագիտության ուղղվածության ծրագրի կատարում, սոլֆեջիո և երաժշտական գրագիտություն) անցկացվում են անվճար և վճարովի համակարգում հիմնական ընդհանուր և միջնակարգ կրթության հիմքով ընդունելությունն իրականացնելու համար: Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջում սովորում է 397 ուսանող:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման համար քոլեջի կողմից կազմակերպվում են բաց դռների օրեր, պատրաստվում են բուկլետներ քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը դիմորդներին ներկայացնելու համար: Փորձագիտական խմբի կողմից քոլեջի պաշտոնական կայքէջի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Ընդունելության մասին տեղեկատվությունը զետեղված է կայքէջի՝ «Դիմորդի անկյուն» բաժնում, որտեղ տեղադրված են նաև ընդունելության հարցաշարերը՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտացումների և քննական առարկաների: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընդունելության համար քոլեջը կարևորում է նաև երաժշտական կրթության առկայությունը, քանզի առանց համապատասխան կրթության ուսանողներն ուսումնառության ընթացքում խնդիրներ են ունենում սոլֆեջիոյի և մասնագիտական առարկաների հաղթահարման տեսանկյունից: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նման ուսանողներին դասախոսները փորձում են աջակցել անհատապես աշխատելու միջոցով. հարկ է նշել, որ առանց համապատասխան կրթության քոլեջ ընդունվողները բավական քիչ են: Դիմորդների հավաքագրման խնդիր է առկա «Երաժշության տեսություն» ՄԿԾ-ում, որտեղ վերջին տարիներին ընդունելությունը նվազել է. 2021-2022, 2022-2023 ուտարիներին տվյալ մասնագիտությունում սովորում են մեկական ուսանող: Ուսումնասիրելով ուսանողների՝ քոլեջից դուրս մնալու և այնուհետև վերականգնվելու մասին ներկայացրած հիմքերը, պարզ է դառնում, որ յուրաքաչյուր տարվա համար դուրս մնացողները չեն գերազանցում մեկ տասնյակը, որոնց մի մասն այնուհետև վերականգնվում է իր դիմումի համաձայն՝ հեռացման պատճառը վերացնելուց հետո: Ուսանողների հեռացման պատճառներն են դասերին, քննություններին կամ վերաքննություններին չներկայանալը, վարձը չվճարելը, անբավարար գնահատականներ ունենալը, ՀՀ բանակ զորակոչվելը: Քոլեջը

ևս փորձում է համապատասխան աշխատանքներ իրականացնել առաջադիմության խնդիր ունեցող ուսանողների հետ՝ հեռացման ցուցանիշները նվազեցնելու համար։

Ուսանողների կրթական կարիքների վերհանման համար քոլեջում իրականացվել են հարցումներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ հարցումները շարունակական չեն եղել վերջին երեք տարիներին։ Դրան նախորդող ժամանակահատվածում իրականացված հարցումների միջոցով վերհանվել է կարիք՝ ուսանողների արտաժամյա քոլեջում մնալու և պարապմունքների իրականացման վերաբերյալ, որը լուծվել է մասամբ՝ ռեսուրսների պահպանման անհրաժեշտությունից ելնելով և թույլ տալով ուսանողներին օգտվել այս հնարավորությունից փոքր խմբերով։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» մասնագիտության ուսանողները, որոնք տանը երաժշտական գործիք չունեն (Դաշնամուրային բաժին), ևս դիմում են տնօրենին՝ քոլեջում դասերից հետո մնալու և աշխատելու համար։ Քոլեջն ուսանողների կրթական կարիքների վերհանման հնարավորություններ է դիտարկում դասալսումները, ամփոփիչ ատեստավորումը, որոնց արդյունքում քննարկվել են հիմնականում դասավանդման մեթոդաբանությանը և ուսանողների կարողությունների զարգացմանն ուղղված հարցերը։ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների (2022-2023 ուստարում քոլեջում սովորում են 11 ուսանող) կրթական կարիքների վերհանման նպատակով քոլեջը փորձում է ապահովել ծնողների հետ հատադարձ կապը։ Փորձագիտական այցի ընթացքում դասախոսների, ծնողների հետ հանդիպումները ևս ցույց տվեցին, որ քննարկումների միջոցով փորձել են ավելի դյուրին դարձնել ուսանողների ուսումնառության գործընթացը՝ Բրայլյան համակարգի կիրառմամբ, դասընթացների ձայնագրման, ծնողների ներկայությունը դասընթացին ապահովելու միջոցով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ, հաշվի առնելով Արցախից տեղափոխված ուսանողների ներհոսքը, քոլեջը պլանավորում է հանդիպումներ իրականացնել ուսանողների հետ՝ նրանց կրթական կարիքների վերհանման և ուսումնառության գործընթացում նրանց աջակցելու նպատակով։

Քոլեջի կրթական ծրագրերը պահանջում են անհատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ. այս հանգամանքը հաշվի առնելով՝ քոլեջը հնարավորություն է տալիս ուսանողներին ընտրելու իրենց անհատական դասընթացների դասախոսներին։ Անհատական դասընթացները հնարավորություն են տալիս նաև առանձին աշխատել յուրաքանչյուր ուսանողի կարողությունների զարգացման և ներուժի բացահայտման վրա։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են նաև դեպքեր, երբ խմբային դասընթացների պարագայում ուսանողների խնդրանքով եղել է դասախոսի փոփոխություն։ Ուսանողներին իրենց ուսումնառության ընթացքում աջակցում են նաև կուրսղեկները, որոնց ուսանողները դիմում են իրենց հուզող հարցերով։ Նախաքննական ժամանակահատվածում, երբ համաձայն ուսպլանների ավարտված է ուսումնական գործընթացը, դասախոսների կողմից իրականացվում է խորհրդատվություն՝ ուսանողներին քննությանը պատրաստելու և հաջորդ կիսամյակի ծրագրի նախնական ուսումնասիրության համար։ Ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանն են նպաստում նաև քոլեջի կողմից կազմակերպվող վարպետաց դասերը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում

օտար լեզուների իմացության զարգացման կամ ընդհանուր մասնագիտական հմտությունների ձևավորման համար լրացուցիչ պարապմունքներ ներդրված չեն։

Վարչական անձնակազմին դիմելու համար առանձին ժամանակացույց քոլեջում սահմանված չէ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարչական աշխատակիցները հասանելի են ուսանողների համար և աջակցում են անհրաժեշտության դեպքում։ Քոլեջի ուսանողները վարչական անձնակազմին հիմնականում դիմում են անհատական պարապմունքների դասաժամերի, մասնագիտական առարկաների դասախոսներին ընտրելու կամ փոխելու համար։ Քոլեջի դասացուցակները, քննական գրաֆիկները հասանելի են ուսանողներին, և այս ուղղությամբ հարցեր հիմնականում չեն առաջանում։

Անդրադառնալով ուսանողների կարիերային նպաստող ծառայություններին՝ հարկ է նշել, որ կարիերայի վերաբերյալ տեղեկատվության, խորհրդատվության աշխատանքներով զբաղվում է Կարիերայի ուղղորդման պատասխանատուն։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ պատասխանատուի կողմից կազմակերպվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ, դասընթացներ գործատուին դիմելու, հարցազրույցին ներկայանալու, ինքնակենսագրականներ կազմելու վերաբերյալ և այլն։ Քոլեջն ունի նաև շրջանավարտների բազա, որը թարմացվում է ուսանողի ավարտելուց հետո մեկամյա պարբերականությամբ։ Ուսումնասիրելով քոլեջի ներկայացրած տվյալները ուսանողների զբաղվածության վերաբերյալ՝ պարզ է դառնում, որ ուսանողների 60%-ից ավելին քոլեջում ուսումնառությունն ավարտելուց հետո կրթությունն անմիջապես շարունակում է բուհում, իսկ մասնագիտությամբ աշխատողների (հիմնականում՝ երաժշտական դպրոցներում) թիվը 30%-ի շրջակայքում է։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս տվյալներն առանձին չեն քննարկվում ամբիոններում և դեռևս չեն դրվել կրթական ծրագրերի պլանավորման գործընթացների հիմքում։

Քոլեջի կրթական ծրագրերի առանձնահատկություններից ելնելով՝ ուսանողի յուրաքանչյուր կատարողական աշխատանքի հիմքում ստեղծագործականության խթանումն է։ Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում ուսանողների հետազոտական կարողությունները խթանող առաջադրանքները հստակորեն առանձնացված չեն։ Այսուհանդերձ, դասալսումներից և մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր աշխատանքին նախորդում է հետազոտության փուլը, որի ընթացքում ուսանողներին հանձնարարվում է ուսումնասիրել ստեղծագործության հեղինակին, կատարման ոճերն ու ստեղծագործական առանձնահատկությունները։ Ուսանողներին տրվող առաջադրանքները ներառում են նաև նույն կոմպոզիտորի ստեղծագործությունների՝ տարբեր կատարողների մեկնաբանումներ, իսկ այնուհետ կատարողական ոճերի համեմատական վերլուծություն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները դասախոսների աջակցությամբ պատրաստում են զեկուցումներ, մասնակցում են ուսանողական գիտաժողովների։ Ուսանողների հոդվածները տպագրվել են ԵՊԿ «Երաժիշտ» ամսաթերթում։

Քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության մարմինը Ուսանողական խորհուրդն է։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն ներկայումս

գործում է նոր կազմով, մշակել է իր կանոնադրությունը, ըստ որի էլ ձևավորվել է գործող համակազմը: Ուսանողական խորհրդին իր գործունեության իրականացման համար առանձին տարածք, բյուջե հատկացված չէ: ՈՒԽ աշխատանքները դեռևս քննարկման փուլում էին, և հստակ պլանավորում խորհուրդը չի իրականացրել, դեռևս սահմանել է միայն տարեկան ժողովների նվազագույնը երեք անգամվա իրականացում: Փորձագիտական հանդիպումներից, ՈՒԽ արձանագրությունների մատյանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ խորհրդի կողմից ուսանողների իրավունքների պաշտպանության կամ կարիքների վերհանման դեպքեր չեն արձանագրվել: Ուսանողական խորհուրդն առավել ակտիվ գործունեություն է ծավալել մշակութային ու սոցիալական բնույթի միջոցառումների կազմակերպման հարցում, ինչպես օրինակ աջակցության ցուցաբերում կարիքավոր ընտանիքներին, աջակցություն համերգների կազմակերպմանը: Այլ Ուսանողական խորհուրդների կամ ուսանողական կառուցների հետ համագործակցություն քոլեջի խորհուրդը դեռ չի հաստատել:

Քոլեջի ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցման գնահատման մեխանիզմներն են հարցումները, որոնք առավելապես իրականացվել են մինչև 2020 թվականը: Ներկայումս իրականացվում են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ, որոնք հիմնականում քանակական տվյալների դուրսբերմամբ են ամփոփվել: Քոլեջում իրականացվել են նաև ֆոկուս խմբային քննարկումներ, որոնք սակայն համակողմանիորեն չեն վերլուծվել հաստատության կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում կանոնակարգված են ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմները, ինչը նպաստում է քոլեջի ուսանողական համակազմի թվաքանակի կայունությանը: Գործընթացների թափանցիկությանը, դիմորդների համար պահանջների հասանելիությանն է նպաստում նաև քոլեջի կայքում տեղեկատվության հրապարակումը, ընդունելության պահանջների ներկայացումը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև քոլեջի կողմից մուտքային պայմանների սահմանումը, ինչը հնարավորություն է տալիս որոշակի կարողություններով ուսանողների ընդունել ուսումնական հաստատություն, որոնց զարգացումը հետագայում ավելի պլանավորված ու հնարավոր է դառնում կրթական ծրագրերի վերջնարդյունքներին հասնելու տեսանակյունից:

Փորձագիտական խմբի կողմից տեսանելի է քոլեջի ուսանողամետ լինելու հանգամանքը, ինչը պայմանավորված է կրթական ծրագրերի ստեղծագործական բնույթով, ուսանողին՝ որպես ստեղծագործող անհատ դիտելու, ուսանողների հետ անհատապես աշխատելու մոտեցումներով: Փորձագիտական խումբը շեշտադրում է ուսանողների կրթական կարիքների շարունակաբար և պարբերաբար վերհանման անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա քոլեջին կրթական միջավայրն ադապտացնել ուսանողների կրթական կարիքներին՝ վերհանված խնդիրները դնելով հետագա բարելավումների հիմքում: Փորձագիտական խումբը դրականորեն նշում է յուրաքանչյուր ուսանողի հետ աշխատելու քոլեջի պատրաստակամությունը, ինչը նպաստում է ուսանողների ստեղծագործական ներուժի բացահայտմանը և զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հուզող հարցերին: Դրական հանգամանք է նաև վարպետաց դասերի կազմակերպումը, ինչը նպաստում է մասնագիտական լավագույն փորձի տարածմանը, ոլորտային մասնագետների հետ ուսանողների ծանոթացմանը և մասնագիտական շրջանակում ընդգրկվելուն: Այսուհանդերձ, քոլեջն անհրաժեշտություն ունի ուշադրություն դարձնելու հատկապես օտար լեզուների ուղղությամբ լրացուցիչ պարապմունքների իրականացմանը՝ լեզվահմացության մակարդակի բարձրացման նպատակով: Այն հնարավորություն կտա ուսումնասիրել միջազգային փորձը, ինչպես նաև ուղիներ գտնել շարժունության ծրագրերում ընդգրկվելու համար:

Դրական հանագամանք է նաև, որ վարչական անձնակազմին դիմելիս ուսանողները ստանում են համապատասխան աջակցություն, ինչը դյուրին է դարձնում ուսումնական գործընթացի կազմակերպումը:

Փորձագիտական խումբը կարոնրում է քոլեջի կարիերայի կենտրոնի դերը ուսանողներին պատրաստելու աշխատաշուկա մուտք գործելուն, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ իրականացնելու հարցերում: Դրական հանգամանք է նաև կենտրոնի կողմից շրջանավարտների զբաղունակության վերաբերյալ տվյալների հավաքագրումը և շրջանավարտների բազայի ստեղծումը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևոր է համարում բազայի շարունակաբար թարմացումը, շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովումը, նրանց կարիքների վերհանումը, ինչի արդյունքների քննարկումը կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների հետ կարող է նպաստել կրթական ծրագրերի հետագա լավարկմանը:

Դիտարկելով ուսանողների ներգրավման հնարավորությունները հետազոտական բնույթի աշխատանքներում՝ փորձագիտական խումբը հաշվի է առել քոլեջի կրթական ծրագրերի ստեղծագորական բնույթ ունենալը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսումնառության ընթացքում տրված առաջադրանքները միտված են կատարողական հմտություններից զատ ստեղծագործական, վերլուծական կարողությունների զարգացմանը, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին դառնալ ուսումնասիրող-երաժիշտներ: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ հետազոտական, վերլուծական առաջադրանքների հստակ արտացոլումը կրթական ծրագրերում կարևոր է՝ ապահովելու դրանց ինստիտուցիոնալ իրականացումը բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում: Դրական հանգամանք է նաև դասախոսների կողմից տրամադրվող աջակցությունը, ինչն ուսանողներին հնարավորություն է տալիս պատրաստել զեկուցումներ և հանդես գալ նաև ուսանողական գիտաժողովներում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում ստեղծված են ուսանողների իրավունքների պաշտպանության հնարավորություններ, և գտնում, որ ՈւԽ դերի հստակեցումը, իրավունքների պաշտպանությանն ու կարիքների վերհանմանն ուղղված գործընթացների իրականացումը մեծապես կարող են բարելավել ուսանողների կրթական միջավայրը: ՈւԽ աշխատանքների պլանավորումը ևս կարևոր է ակնկալվող արդյունքների սահմանման, փորձի կուտակման և հաջորդ ՈւԽ-ին փոխանցելու տեսանկյունից: Արտաքին

կապերի հաստատումը քոլեջի Ուսանողական խորհրդի համար կարող է կարևոր լինել՝ նպաստելու քոլեջի մասին իրազեկվածության բարձրացմանը, նոր համագործակցությունների ստեղծմանը, այլ քոլեջների և արվեստի հաստատությունների հետ կրթամշակութային միջոցառումների իրականացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև կրթական և ուսանողներին տրամադրվող մյուս ծառայությունների պարբերաբար գնահատումը, ինչը հնարվորություն կտա ուսումնական միջավայրը դարձնել ավելի գրավիչ և շարունակաբար ընդլայնել դիմորդների հոսքը քոլեջ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ քոլեջն աջակցում է ուսանողների կարիքների բավարարմանը և ուսումնական միջավայրի բարելավմանը՝ փորձելով ապահովել համապատասխան ռեսուրսներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ուսանողների ընտրության և ընդունելության կանոնակարգված մեխանիզմներ, առկա է դիմորդների կայուն հոսք, ուսանողների կրթական կարիքները գտնվում են քոլեջի ուշադրության կենտրոնում, ուսանողներին տրամադրվում է համապատասխան աջակցություն ու խորհրդատվություն, առկա է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, գործում են կարիերային նպաստող ծառայություններ, առկա են ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Դասախոսական կազմի համալրման և ընտրության գործընթացը քոլեջն իրականացնում է «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՄՆ հրամանի համաձայն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջին տարիների ընթացքում տեղի են ունցել դասախոսական կազմի համալրման մրցույթներ. դասախոսական կազմի ընտրության համար կազմվել են հարցատոմսեր, որոնք իրենց մեջ ներառում են հարցեր և՛ մասնագիտական մոդուլներից, և՛ մանկավարժական ոլորտից: Դասախոսական կազմի մրցույթի արձանագրությունները փաստում են, որ դասախոսական կազմի ընտրության գործընթացում քոլեջը կարևորում է դասավանդողի մասնագիտական

պահանջները: Մրցութային արձանագրություններում երևում են մրցութային հանձնաժողովի արձագանք-գնահատումը թեկնածուին: Այս համատեքստում քոլեջը կարևորում է դասախոսական կազմի բարձրագույն մասնագիտական կրթությունը և դրա համապատասխանությունը դասավանդվող առարկայի և/կամ մոդուլի առանձնահատկություններին, ինչպես նաև ՊԿՉ-ով սահմանված պահանջներին: Դասախոսական կազմի համար քոլեջի կողմից մշակված պահանջներ, ըստ առանձին ՄԿԾ-երի, առկա չեն: Դասախոսական կազմի մասնագիտական որակավորումների և առարկայացանկի համադրությունից պարզ դարձավ, որ քոլեջի դասավանդող կազմն համապատասխանում է դասավանդվող առարկայի և/կամ մոդուլի և ՊԿՉ պահանջներին: Գործող դասախոսներն ունեն երաժշտական բարձրագույն կրթություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների համալրման գործընթացում քոլեջը կարևորում և արժևորում է այնպիսի դասախոսների ներգրավումը, որոնք ունեն գիտական աստիճան և/կամ կոչում, արվեստի ոլորտում ունեն նշանակալի դեր:

2018թ. փետրվարի 7-ին տնօրենի կողմից հաստատվել է հանրակրթական, ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական դասընթացների, ինչպես նաև ընդհանուր և մասնագիտական դասընթացների դասախոսների պաշտոնի անձնագրերը, որտեղ առանձնացված են դասախոսի աշխատանքային պարտականությունները և պատասխանատվությունը, որոշումներ կայացնելու լիազորությունները և իրավունքները, գործառույթները: Քոլեջը տարանջատել է նաև դասախոսին ներկայացվող գիտելիքի, տեխնիկական կարողությունների, ինչպես նաև անձնային կարողությունների վերաբերյալ պահանջներ, որոնք են. ունենալ տվյալ բնագավառը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողություններ ձևավորելու համար պահանջվող տեսական և գործնական գիտելիքներ, ուսուցման մեթոդների, հոգեբանության, մանկավարժության վերաբերյալ խորացված գիտելիքներ, հաղորդակցման, ռիսկերի գնահատման, իր աշխատանքային գործունեությանն առնչվող առաջարկությունների հավաքագրման և քննարկման կարողություններ և այլն:

Դասախոսական կազմի պարբերական գնահատման հիմնական քոլեջի մոտեցումները ներառում են դասալսումները, ուսանողների, վարչական կազմի կողմից իրականացվող գնահատումները, ինքնագնահատումները: Ինքնավերլուծության և այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների համաձայն՝ քոլեջի ներկայացուցիչները գտնում են, որ դասախոսների գնահատման գործընթացի արդյունավետությունը դժվար է ապահովել, քանի որ գործող մեխանիզմների վրա ազդում են մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ անձի առանձնահատկություններ, ուսանողների ոչ բավարար տեղեկացվածություն և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինքնագնահատման մեխանիզմն արդյունավետ չի համարվել քոլեջի կողմից, և հաստատությունը պլանավորում է վերանայել այս գործիքը հետագա կիրառման նպատակահարմարության որոշման համար: Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման կայուն մեխանիզմներից է դասալսումը:

Դրանք իրականացվում են են որակի ապահովման բաժնի ղեկավարի, ամբիոնների վարիչների և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների մասին ոչ միշտ են նախապես տեղեկացվում դասախոսները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումները չեն իրականանում ըստ վերհանված կարիքի, ինչպես նաև վարչական տարբեր աշխատակիցների կողմից իրականացվող դասալսումների իրականացման նպատակները տարանջատված չեն, հաճախ դրանք նույնականացվում են: Իրականացված դասալսումների արդյունքում դասախոսի փոփոխության դեպք է արձանագրվել՝ հաշվի առնելով նաև ուսանողների կարծիքները: Դասալսման արդյունքները քննարկվում են դասախոսների հետ: Դասալսումների թերթիկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասալսման արդյունքում շեշտադրվել են ուսանողների մոտ երաժշտական մտածողության զարգացման անհրաժեշտությունը, ձեռքերի տեխնիկական աշխատանքը, տոնայնության, հնչյունային արտաբերման խնդիրները և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքների համապարփակ վերլուծություններ և դրանց հիմքով փոփոխությունները այդքան էլ տեսանելի չեն: Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներից է համարվում նաև ուսանողների շրջանում իրականացվող հարցումները, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրանք 2019թ.-ի առ այսօր պարբերական բնույթ չունեն:

Քոլեջի դասախոսական կազմը պարբերաբար մասնակցում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին: Դասախոսների մասնագիտական հմտությունների զարգացմանը նպաստում են վարպետաց դասերը, ԵՊԿ իրականացվող տարատեսակ մասնագիտական միջոցառումները: Փորձագիտականն այցից պարզ դարձավ, որ «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» ՄԿԾ-ի դասախոսական կազմը իրականացնում է երաժշտական գործիքների կատարման վարպետաց դասեր՝ հաջողված և լավագույն փորձը տարածելու նպատակով: Հարկ է նշել, որ վերոնշյալ վերապատրաստումները չեն իրականացվում ինստիտուցոնալ մակարդակում դասախոսական կազմի կարիքների գնահատման և վերլուծության հիմքով, դասառխսների կարիքները քննարկվում են հիմնականում ներամբիոնային հանդիպումների ժամանակ: Քոլեջի բյուջեի դիտարկումից պարզ դարձավ, որ վերջին տարիների ընթացքում քոլեջը ֆինանսական միջոցներ չի տրամադրել դասախոսների վերապատրաստումների համար:

Քոլեջը, ըստ ՄՌ քաղաքականության, աշխատողների մասնագիտական առաջխաղացման և աշխատանքից բավարարվածություն ստանալու համար մշակվել է աշխատանքի գնահատման մեխանիզմ, որը ենթադրում է աշխատողի կատարողականի վերլուծություն ամբիոնային նիստերի, խորհուրդների նիստերի ընթացքում: Այս համատեքստում առկա են մասնագիտական առաջընթացի նախադեպեր, օրինակ Կարիերայի պատասխանատուն այժմ աշխատում է որպես կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: ՄՌ քաղաքականությամբ սահմանվում է նաև աշխատակիցներին նյութական և ոչ նյութական խրախուսանք տրամադրելու ձևերը և մոտեցումները: Այցից պարզ դարձավ, որ մասնագիտական աշխատանքը որակյալ կատարելու

համար որոշ աշխատակիցներ ստացել են պատվոգրեր, մեդալներ և այլն: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ խրախուսման համար հստակ պահանջներ և չափանիշներ ևս սահմանված չեն:

Քոլեջում աշխատում է 172 դասախոս, որից 74 հիմնական, 26 համատեղությամբ, 41 ժամավճարային, որոշակի ժամկետով աշխատող 31 մանկավարժ /կենսաթոշակային տարիք/: Քոլեջը խրախուսում է նաև իր շրջանավարտների ներգրավումը դասավանդման գործընթացում: Որոշ դասախոսներ դասավանդում են նաև ԵՊԿ-ում (13 դասախոս), որոնց թվում առկա է 6 պրոֆեսոր, 2 դոցենտ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսները 151-ն են /շուրջ 88%/: Դասախոսական կազմի երիտասարդացման միտումներ ևս առկա են: Մինչև 35 տարեկան դասախոսների թիվը դասախոսական ընդհանուր համակազմում կազմում է շուրջ 24%: Այս տարիների ընթացքում քոլեջը փորձել է նաև ձևավորել դասախոսական կազմի ռեզերվ: Համապատասխան թեկնածուների տվյալները պահպանում են քոլեջում հետագայում համալրման նպատակով:

Հաշվի առնելով քոլեջի սահմանած ռազմավարական նպատակները, խնդիրները, ինչպես նաև արվեստի ոլորտում կրթության կազմակերպման առանձնահատկությունները՝ քոլեջն ունի համապատասխան որակավորմամբ վարչական և ուսումնաօժանդակ կազմ (նվագակցողներ, իլյուստրատորներ, ընդհանուր թվով՝ 25 աշխատակից): Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների համար քոլեջը մշակել է պաշտոնի հրահանգներ, որտեղ սահմանվում են համապատասխան աշխատակիցների գործունեության շրջանակները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը շարունակաբար համալրում է իր դասախոսական կազմն արհեստավարժ ու մասնագիտական մեծ փորձ ունեցող դասավանդող կազմով, ինչը մեծապես նպաստում է կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Կարևոր հանգամանք է, որ քոլեջն առանձնացրել է չափանիշներ, որոնք հաշվի է առնում դասախոսական կազմի ընտրության ժամանակ: Այսուհանդերձ, անհրաժեշտ է նաև ըստ մասնագիտությունների առանձնահատկությունների չափանիշների կիրառումը դասախոսական կազմի ընտրության ժամանակ, ինչը հնարավորություն կտա քոլեջին առավել արդյունավետ դարձնել դասախոսական կազմի համալրման գործընթացը, նեղ մասնագիտական ուղղություններով ներգրավել մասնագետներ, որոնց փորձն ու մասնագիտական կարողությունները ևս կնպաստեն կրթական ծրագրերի բարելավմանն ու ուսանողների որակավորումների արժանահավատ շնորհմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կիրառում է դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, ինչպիսիք են դասալսումները, հարցումները, ինքնագնահատման գործիքները: Դասալսումների դիտարկումը՝ որպես կատարողականի գնահատման մեխանիզմ, նպաստել է դասավանդման գործընթացի որոշակի կարիքների վերհանմանը, ինչ արդյունքում դասախոսների հետ քննարկվել են դասավանդման ու գնահատման մեթոդների բարելավմանն ուղղված քայլերը: Փորձագիտական խումբը

գտնում է, որ դասալսումների արդյունքների համակողմանի վերլուծությունը, կիրառվող բազմատեսակ դասալսումների տվյալների մեկտեղումը կարևոր կարող են լինել գործիքի արդյունավետության բարձրացման համար, ինչը կնպաստի նաև դասախոսական կազմի կարիքների շարունակական գնահատմանը և դրա արդյունքում դասախոսների կատարելագործմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը: Կիրառվող գործիքների որակի ապահովման տեսանկյունից փորձագիտական խումբը շեշտադրում է դրանց պարբերականության կանոնակարգումը, հավաքագրված տվյալների արժանահատավտության բարձրացումը, ինչը քոլեջին հնարավորություն կընձեռի խնդիրների վերհանման գործընթացը դարձնել առավել կանոնակարգած, փոխկապակցել դրանք դասախոսների հետ տարվող աշխատանքների, երիտասարդ դասախոսների մասնագիտական զարգացման հետ:

Դրական հանգամանք է, որ քոլեջն իր ռազմավարական ծրագրում առանձնացրել է դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտությունը, որոնք կազմակերպվում են հիմնականում ներքին ռեսուրսի կիրառման, հրավիրյալ դասախոսների հետ համագործակցության շրջանակներում: Ֆինանսական միջոցների հատկացումը կարող է նպաստել մասնագիտական վերապատրաստումների համար լրացուցիչ հնարավորությունների ստեղծմանը: Դրական հանգամանք է նաև ամբիոնային լավ փորձի տարածմանն ուղղված միջոցառումների անցկացումը, ինչի կանոնակարգումը կարևոր է ինստիտուցիոնալ մակարդակում գործընթացներն ամրագրելու և դասախոսների կարիքներին համապատասխան գործընթացները պլանավորելու համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև, որ քոլեջում առկա են որոշ գործքիներ դասախոսական կազմի մասնագիտական առաջխաղացման և խրախուսման համար, ինչի արդյունքում արձանագրվում են պաշտոնային աճի դեպքեր: Այս համատեքստում հստակ չափանիշների սահմանումը, դրանց մասին թափանցիկության ապահովումը կնպաստեն դասախոսների շրջանում դրանց մասին իրազեկվածության բարձրացմանը, ջանքերի գործադրմանը մասնագիտական զարգացման նպատակով:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քոլեջը համալրման տարբեր գործիքների, ռեզերվի, շրջանավարտների միջոցով կադրերի երիտասարդացման շնորհիվ ապահովում է դասախոսական կազմի կայունությունը և սահուն սերդնափոխությունը, ինչի արդյունքում կրթական ծրագրերի իրականացման ռիսկեր քոլեջում չկան: Կարևոր է, որ քոլեջը շարունակաբար կատարելագործի այս մոտեցումները՝ հատկապես շեշտադրելով պրակտիկ ոլորտից դասախոսական կազմի ներգրավումը, ինչը դրականորեն է անդրադառնում ուսանողների վերջնարդյունքների ձեռքբերման և ուսանողների կատարողական կարողությունների զարգացման վրա:

Քոլեջը ռազմավարական նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացման համար հիմնականում ապահովված է նաև համապատասխան քանակի և որակի ուսումնաօժանդակ կազմով, ինչը կարևոր հանգամանք է երաժշտության ոլորտում որակյալ շրջանավարտներ թողարկելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի համապատասխան դասախոսական կազմ կրթական ծրագրերի նպատակների իրականացման համար, ներդրված են ընտրության և համալրման մեխանիզմներ, քոլեջն ապահում է պրակտիկ փորձառությամբ դասախոսների ներգրավվածությունը կրթական գործընթացներում և դասախոսական կազմը կայունությունը, առկա են երիտարդացման միտումներ, գործում են դասախոսական կազմի գործունեության որոշ մեխանիզմներ և առաջխաղացման հնարավորություններ, ինչպես նաև քոլեջն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ կազմ հաստատության ռազմավարական նպատակների իրականացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

2023թ. քոլեջը մշակել է «Հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների քաղաքականություն», որտեղ ներկայացվել են հետազոտության հասկացությունները, հետազոտական աշխատանքների ուղղությունները, հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների կիրառման սկզբունքներն ու մեթոդները: Ըստ քաղաքականության՝ երաժշտական մասնագիտության ոլորտում հետազոտությունը կիրառվում է կատարողական, երաժշտատեսական, գեղագիտության ոլորտներում: Կատարողական մասնագիտությունների մասով քոլեջում իրականացվում է հետազոտական աշխատանք՝ կատարողական կերպերի, սկզբունքների, մեթոդների, ավանդույթների համեմատական վերլուծության, մասնագիտական երաժշտական մոտեցումների համաձայն դրանց տեղայնացման նպատակով: Փորձաքննության ընթացքում իրականացված դասալսումներից պարզ դարձավ, որ հետազոտական բաղադրիչն առկա է ստեղծագործությունների յուրացման փուլերում և կատարողական գործընթացներում, երբ ուսանողները կատարողական գործընթացին զուգահեռ անդրադարձ են կատարում նաև երաժշտական արվեստում մոտեցումների հիմնավորմանը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հաշվի առնելով առանձին ՄԿԾ-ների առանձնահատկությունները՝ տարանջատված չեն քոլեջի հետազոտական հետաքրքրությունները կամ ուղղությունները:

Քոլեջի 2019-2024թթ. ՌԾ-ում հետազոտական ուղղության զարգացումը չի ներկայացվել որպես առաջնահերթություն: Հաստատության կարճաժամկետ պլանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այստեղ հետազոտական գործունեությանը միտված

գործընթացներ ևս առանձնացված չեն։ Այսուհանդերձ, Հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների քաղաքականությամբ, ինչպես նաև փորձագիտական հանդիպումների և դասալսումների ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը հետազոտական գործընթաց է համարում դասավանդման գործընթացը, քանի որ իրականացվում է անհատական աշխատանք յուրաքանչյուր ուսանողի հետ՝ ըստ ուսանողի կոգնիտիվ ունակությունների, մշակվում են մեթոդներն ու մոտեցումները, որոշում դրանց համադրելիությունն ու արդյունավետությունը։ Այսպես օրինակ, ուսանողներին հանձնարարվում է ուսումնասիրել տվյալ ստեղծագործական դարաշրջանը՝ ոճական, գեղագիտական, պատմական, երաժշտատեսական առումով։ Մեկ այլ օրինակ է, երբ ուսանողներն ուսումնասիրում են կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությունը, կոմպոզիտորների ստեղծագործություններն ու ոճերը, ունկնդրում նույն ստեղծագործության տարբեր կատարումներ, ճանաչում, տարբերակում կատարողական սկզբունքներն ու մեթոդները, կազմում ստեղծագործության կատարման քարտեզ, աշխատում բեմական հուզմունքի հաղթահարման վրա՝ հաշվի առնելով անձի առանձնահատկությունները։ Քոլեջում ռեֆերատների իրականացումը դիտարկում է որպես ստեղծարար միտք զարգացնող աշխատանք։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում հանձնարարվում են տեսական առարկաների համար։ Ռեֆերատների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում վերլուծական բաղադրիչը դեռևս թույլ է արտահայտված, ընդհանուր առմամբ բացակայում են հղումները մասնագիտական գրականությանը, գրականության ցանկերը։ Ռեֆերատներում ուսանողների ինքնուրույն եզրահանգումների ներկայացման պահանջ ևս առկա չէ։ Այդուհանդերձ, հարկ է նշել, որ որոշ ռեֆերատներում ներկայացված են ուսանողների ինքնուրույն ուսումնասիրությունները, տարբեր հեղինակների ստեղծագործությունների համեմատությունները, կատարողական կերպերի համադրությունները և դրանց շուրջ եզրահանգումները։

Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ ուսանողները դասախոսների հետ համատեղ իրականացնում են հետազոտական աշխատանքներ, պատրաստում զեկուցումներ և այնուհետ ներկայացնում դրանք ուսանողական գիտաժողովներում։ Որոշ դեպքերում դրանք նաև տպագրվել են ուսանողական հանդեսներում և թերթերում, որպես օրինակ կարելի է նշել հետևյալ զեկուցումները՝ «Արամ Խաչատրյանի հուշերը Կոնստանտին Սարաջևի մասին», «Խաչատուր Աբովյանը և հայկական երաժշտական մշակույթը» հոդված՝ հրատարակված ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուում, «Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունների փոխադրումները քանոնի համար»՝ տպագրված ԵՊԿ «Երաժիշտ» ամսաթերթում և այլն։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ընթացիկ կատարողական առաջադրանքները ևս ենթադրում են ստեղծագործական մոտեցման կիրառում, այսպես օրինակ ուսանողներն իրենց ծրագրային ստեղծագործությունները կատարում են ինդիվիդուալ մոտեցմամբ՝ ընդգծելով երաժշտական կատարման իրենց անհատական տեխնիկան։ Այսուհանդերձ նկատելի է, որ առաջադրանքների նորարական բաղադրիչի, ուսանողի կողմից ստեղծագործական մոտեցման, նոր ոճերի համակցման

ինստիտուցիոնալ պահանջն արտացոլված չէ ՄԿԾ-ներում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ դասալսումներից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն ուսանողներին տրամադրում են ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, ինչպես օրինակ ուսանողներին հանձնարարվում է կատարել նախընտրելի ստեղծագործություններն իրենց երաժշտական ընկալմամբ, գրել էտյուդ՝ կիրառելով նախապես սովորած տեխնիկան: Քոլեջը ձևավորել է նվագախումբ, համույթ, որոնց գործունեությունում ևս արտահայտվում է ստեղծագործականությունը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները երգերը նորովի տարբերակով են փորձում ցույց տալ համերգների ու մրցույթների ժամանակ: Բացի այդ, ուսանողներն ու դասախոսները ստեղծագործական գործունեությանը զուգահեռ իրականացնում են նաև ինքնատիպ ելույթներ: Հարկ է նշել, որ ստեղծագործական միտք ունեցող ուսանողներին աջակցում են քոլեջի դասախոսները՝ իրենց աշխատանքների լուսաբանման և հրապարակման հարթակում:

Անդրադառնալով դասախոսական կազմի հետազոտական գործունեությանը՝ հարկ է նշել, որ քոլեջի դասախոսները տպագրել են իրենց հոդվածները, զեկուցումները տարբեր գիտական ժողովածուներում, սակայն դրանց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ներկայացված ժողովածուներում դասախոսական կազմի ներկայացուցիչները հիմնականում հանդես չեն եկել որպես քոլեջի դասավանդողներ: Դասախոսական կազմի կողմից հրատարակվել են ուսումնական ձեռնարկներ, ինչպիսիք են՝ Հայ երաժշտության գրականություն, Հայ երաժշտության պատմություն, Ժողովրդական պարեղանակներ զուռնայի համար, Երաժշտության տարրական տեսության ձեռնարկ, Օպերալիա, Մանրանվագ ֆլեյտայի և դաշնամուրի համար, սոլֆեջիոյի ձեռնարկներ և այլն:

Դասախոսների կողմից մշակված ուսումնական ձեռնարկները կիրառվում են մասնագիտական մոդուլների դասավանդման գործընթացում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներն աջակցում են ուսանողներին իրենց զեկուցումները պատրաստելիս:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը մշակել է Հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների քաղաքականություն, ուր առանձնացված հետազոտական աշխատանքների ուղղությունները, հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների կիրառման սկզբունքներն ու մեթոդները, որոնք որոշակիորեն նպաստում են ուսանողների մոտ ստեղծագործական մտքի ու հետազոտական հմտությունների ձևավորմանը: Կարևոր է, որ քոլեջը նախանշել է երաժշտական մասնագիտության ոլորտում հետազոտության կիրառման ուղղությունները, բացի այդ կատարողական մասնագիտությունների մասով հետազոտական շեշտադրումներն ուղղված են մասնագիտական երաժշտական մոտեցումների համաձայն կատարողական կերպերի, սկզբունքների, ավանդույթների համեմատական վերլուծությանն ու դրանց տեղայնացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ կատարողական գործընթացներում և ստեղծագործությունների յուրացման բոլոր փուլերում ներդրված է հետազոտական բաղադրիչը՝ խթանելով կատարողական, երաժշտատեսական և

գեղագիտության ոլորտներում հետազոտության հետագա զարգացումը: Փորձագիտական խումբը նշում է, որ ըստ կրթական ծրագրերի առանձնահատկությունների հետազոտական հետաքրքրությունների տարանջատումը կարող է էապես բարելավել հետազոտական գործունեության պլանավորումը և շեշտադրել հետազոտական գործունեության կապն ուսումնառության հետ:

Թեև քոլեջի ՌԾ-ով հետազոտական ուղղության զարգացումը չի դիտարկվել որպես առաջնահերթություն, պլանավորումներում շեշտադրված չեն հետազոտական գործունեությանը միտված գործողություններ, այդուհանդերձ դրական հանգամանք է, որ ուսանողներին տրվում են հետազոտական բնույթի առաջադրանքներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակում: Դասավանդման գործընթացը դիտարկելիս փորձագիտական խումբը հատկապես շեշտադրում է ուսանողների ունակություններին և յուրահատկություններին համարժեք նրանց հետ տարվող անհատական աշխատանքները, որոնք թույլ են տալիս յուրաքանչյուր ուսանողի ներուժին համապատասխան խթանել նրա ստեղծագործական և վերլուծական կարողությունները: Գովելի է՝ ուսանողներին տրվող առաջադրանքները ներառում են ստեղծագործական բաղադրիչ, ուսանողներն իրենց ծրագրային ստեղծագործությունները կատարում են ինդիվիդուալ մոտեցմամբ՝ ընդգծելով երաժշտական կատարման իրենց անհատական տեխնիկան: Սակայն խնդրահարույց է, որ հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքները, ուսանողի կողմից ստեղծագործական մոտեցման, նոր ոճերի համակցման ինստիտուցիոնալ պահանջը ՄԿԾ-ների պարտադիր բաղադրիչ չեն, բացի այդ առկա ռեֆերատները հիմնականում հանձնարարվում են տեսական առարկաների համար և նրանցում վերլուծական, ստեղծագործական բաղադրիչը թույլ է արտահայտված: Ուստի կրթական ծրագրերում նորարարական բաղադրիչ, ստեղծագործական մոտեցում պարունակող պարտադիր առաջադրանքների ներառումը կարող է էապես բարելավել և կանոնակարգել ուսանողների հետազոտական գործունեությունը:

Փորձագիտական խումբն արժևորում է քոլեջում գործող նվագախմբի և համույթի առկայությունը, ուր համերգներին ուսանողների կատարումներում արտահայտվում է նրանց ստեղծագործականությունն ու ինքնատիպությունը՝ նպաստելով քոլեջում ստեղծագործական միջավայրի ձևավորմանն ու տարածմանը:

Գովելի է, որ քոլեջի դասախոսներն ունեն տպագրված հոդվածներ, զեկուցումներ, բացի այդ նրանց ուսումնական ձեռնարկները կիրառվում են մասնագիտական մոդուլներում, մեթոդական ուղեցույցները՝ ուսումնառության պրոցեսում, ինչն ուղղակիորեն փաստում է հետազոտության և ուսումնառության փոխկապվածության մասին: Կարևոր հանգամանք է, որ դասախոսներն ու ուսանողներն ունեն համատեղ հետազոտական աշխատանքներ, զեկուցումներ, և դասախոսների օժանդակությունն ուսանողական գիտաժողովներում զեկուցումների տպագրմանը նպաստում է ստեղծագործական միտք ունեցող ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը և դրսևորմանը ուսանողական գիտաժողովներում: Փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտության ոլորտում խրախուսման մեխանիզմների ներդրումը կարող է խթանել հետազոտական գործունեության

ընդլայնումն ու զարգացումը՝ ներառելով ուսանողների ու դասախոսների առավել լայն շրջանակի:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը մշակել է հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների իրականացման քաղաքականություն, փորձել է սահմանել հետազոտության իրականացման սկզբունքները երաժշտության ոլորտում, ուսանողներին տրվող առաջադրանքներն ունեն ստեղծագործական-վերլուծական բաղադրիչ, առկա են ստեղծագործական միջավայրի ձևավորման և տարածման մեխանիզմներ, դասախոսական կազմն իրականացնում է գիտահետազոտական և մեթոդական գործունեություն, հետազոտական գործընթացի և ուսումնառության կապն արտահայտված է ուսանողներին տրվող առաջադրանքներում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի 2019-2024թթ. ՌԾ-ի խնդիրներից է ռեսուրսներով հագեցած ուսումնական և աշխատանքային միջավայրի ստեղծումը, որի համար քոլեջն անհրաժեշտ է համարում շենքային և նյութատեխնիկական պայմանների բարելավումը, ուսումնական, լաբորատոր բազայի զարգացումը և արդիականացումը, էլեկտրոնային գրադարանի ձևավորումը:

Քոլեջն ունի 5252,1մ^2 ընդհանուր մակերեսով տարածք, մեկ ուսանողին բաժին ընկնող լսարանային մակերեսը կազմում է շուրջ 5մ^2: Քոլեջն ունի 3 համերգային դահլիճ, գրադարան, ընթերցասրահ, ձայնադարան-տեսադարան, մարզադահլիճ, բուժկետ: Քոլեջն ունի 72 լսարան, որոնց գերակշիռ մասն ապահովված է դաշնամուրներով: Համակարգչային լսարանն ունի 8 համակարգիչ, որոնք տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման կարիք ունեն: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջը չունի քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 25.730 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, նոտային գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով և ռուսերենով է: Գրադարանը դեռևս թվայնացված չէ: Ձայնադարանը համալրված է 5 պորտատիվ ձայնարկիչներով, առկա է 5 ձայնի ուժեղացուցիչ (դինամիկ), մեկ հեռուստացույց և DVD նվագարկիչ՝ դասավանդվող առարկաների շրջանակներում տեսալսողական

նյութերին ծանոթանալու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր երաժշտական դպրոցների ռեսուրսները:

Քոլեջի հիմնադրումից առ այսօր դաշնամուրներ և ռոյալներ ձեռք չեն բերվել: Քոլեջն ունի 13 դաշնամուր, 7 ռոյալ, 10 այլ երաժշտական գործիք՝ ջութակ, քսիլոֆոն, տրոմբոն, սանթուր, թմբուկների հավաքածու, կոնտաբաս, տավիղ և այլն: Վերջին տարիներին քոլեջը նոր երաժշտական գործիքներ է համալրել նվիրատվությունների հաշվին, օրինակ՝ 2021-2022թթ.՝ 4 դաշնամուր և 2023թ.՝ տրոմբոն: Հարկ է նշել, որ երաժշտական գործիքները հնամաշ են, դաշնամուրների ստեղնաշարերը վնասված են, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում անհատական պարապմունքներին գործիքները կիրառելիս: Երաժշտական գործիքները պարբերաբար վերանորոգվում են: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջն իրականացրել է լսարանային ֆոնդի վերանորոգումներ, որոշ բարելավումներ:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2022թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 94,2 %-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին: Պատկերը գրեթե նույնական է 2019-2021թթ. թվային տվյալները համադրելիս: Ըստ 2019-2022թթ. ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների բյուջեի բաշխման տվյալների՝ զարգացման, գիտագործնական, ստեղծագործական գործունեության, գրադարանային ֆոնդի թարմացման, նոր սարքավորումների ձեռքբերման համար քոլեջը դրամական հատկացումներ չի տրամադրել: 2019թ. և 2021թ. ընդամենը՝ 0,02 %-ի չափով ֆինանսավորում է տրամադրվել գույքի ձեռքբերման համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում դեռևս առկա չեն: Երբեմն որոշ մրցույթներ ու միջոցառումներ ֆինանսավորում են բարեգործական և գործընկեր կազմակերպությունների միջոցների հաշվին: Այդ հիմքով՝ 2022թ. քոլեջի բյուջեի եկամուտների 88%-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, 12%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջն իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան, որոնցից ներգրավված մուտքերը քիչ տեսակարար կշիռ ունեն քոլեջի բյուջեի եկամուտների կառուցվածքում՝ կազմելով շուրջ 0,02%:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի համար առավել շահեկան է «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» մասնագիտության ժողովրդական գործիքներ մասնագիտացումը, ընդ որում՝ դհոլի բաժնում պահանջարկը մեծ է, և այս բաժինն ամբողջությամբ վճարովի է: Փողային գործիքների բաժնում վերջին տարիներին ևս ավելացել է ընդունելությունը: Ընդունելությունը խնդրահարույց է «Երաժշտության տեսություն» մասնագիտությունում, ուր ուսանողների քանակը բավականի նվազել է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ մասնագիտությունների խմբեր ուսանողների քիչ թվաքանակով պայմանավորված միավորվել են՝ ծախսարդյունավետության ապահովման համար: Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ

չի իրականացրել և հստակ չէ՝ ուսանողների ո՞ր քանակն է ապահովում ինքնածախսածածկում: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն չի արձանագրվել: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն իրականացրել է շենքային պայմանների, լսարանային ֆոնդի բարելավումներ, վերանորոգել են համերգային դահլիճները:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով, հաստատության ներսում՝ էլեկտրոնային նամակագրության միջոցով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թղթային տարբերակով և աշխատակիցների անձնական էլ. հասցեների կիրառմամբ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում դեռևս ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Քոլեջն ունի բուժկետ, բուժքույր, ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են բուժկետի ծառայություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 11 ուսանող, որոնց ինտեգրում է կրթական ծրագրերում: Բացակայում են թեքահարթակները: Որպես ապաստարան հատկացված տարածքը բարվոք վիճակում չի գտնվում: ՔՊ շտաբի պլանի համաձայն իրականացվում են տարհանման միջոցառումներ, ինչպես օրինակ 2022թ. իրականցվել են վարժանքներ հետևյալ թեմաներով՝ «Անձնակազմի և ուսանողների տարհանումը հրդեհի դեպքում», «Առաջին բուժօգնություն՝ այրվածքների դեպքում», «Ուսանողների գործողությունները երկրաշարժի ժամանակ»:

2022-2023թթ. քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են համերգային դահլիճների պայմաններից և գրադարանային ծառայություններից: ՈՒսանողների և դասախոսների շուրջ 30-35%-ը շենքային, լսարանային ու սպորտդահլիճի պայմաններից ունեն ցածր բավարարվածություն: Դաշնամուրների վիճակից ցածր բավարարվածություն ունեն ուսանողների 34%-ը, դասախոսների՝ 26%-ը: Քոլեջի երաժշտական գործիքները (դաշնամուրները) մաշված են, ներքին և արտաքին շահակիցները ևս վեր են հանել այդ խնդիրը, որի լուծման համար քոլեջը զգալի ֆինանսական ռեսուրսների ներդրման կարիք ունի:

Դատողություններ: Փորձագիտական խումբն արժևորում է, որ քոլեջը ՌԾ-ի խնդիրներում ներառել է ռեսուրսներով հագեցած ուսումնական և աշխատանքային միջավայրի ստեղծումը և երաժշտական ուղղվածությամբ ՄԿԾ-ների իրականացման համար ձևավորված է ուսումնական միջավայր՝ նպաստելով երաժշտական մշակույթի ձևավորմանն ու տարածմանը: Դրական է, որ վերջին տարիներին նվիրատվությունների հաշվին քոլեջը որոշակիորեն համալրել է երաժշտական գործիքների բազան: Այսուհանդերձ խնդրահարույց է, որ քոլեջի հիմնադրումից առ այսօր ֆինանսական

ավելի մեծ ներդրում պահանջող որոշ երաժշտական գործիքներ ձեռք չեն բերվել, իսկ առկա գործիքները հնամաշ են և պարբերաբար վերանորոգման կարիք ունեն։ Այս համատեքստում փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի միջոցները չեն բավարարում նոր գործիքների ձեռքբերման համար, և երաժշտական գործիքների նորացումը մեծ ծախսային բեռ է քոլեջի բյուջի համար։ Ուստի, խնդրի լուծման համար քոլեջը կարիք ունի ինչպես պետական աջակցության, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների ֆինանսական օժանդակության նշյալ խնդրի լուծումը իրատեսական դարձնելու համար։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն իր ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար ունի բավարար ֆինանսական ռեսուրսներ, ուր զգալիորեն մեծ բաժին են կազմում աշխատավարձերը։ Գովելի է, որ քոլեջի մուտքերն ապահովվում են նաև արտաբյուջեի հաշվին, քիչ մաս են կազմում կարճաժամկետ դասընթացներից մուտքերը, բացի այդ, որոշ մրցույթներ և համերգներ ֆինանսավորում են բարեգործական և գործընկեր կազմակերպությունները՝ նպաստելով քոլեջի մուտքերի ավելացմանը։ Այդքանով հանդերձ, փորձագիտական խումբն իր անհանգստությունն է ներկայացնում առ այն, որ քոլեջն արդյունավետ ֆինանսական կառավարում չի իրականացնում և զարգացման, ստեղծագործական գործունեության, գրադարանային ֆոնդի թարմացման, նոր գործիքների ձեռքբերման համար դրամական միջոցների չի տրամադրում, ինչը կարող է խոչընդոտել քոլեջի հետագա զարգացումը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսավորման նոր մոդելների ներդրումը, նոր աղբյուրների որոնումը կարող է զգալիորեն բարելավել քոլեջի ֆինանսական վիճակը՝ ապահովելու ռազմավարական հանդիսացող ուղղություններով քոլեջի դինամիկ զարգացումը։

Գովելի է, որ քոլեջի ՄԿԾ-ներն ապահովված են անհրաժեշտ ուսումնական ռեսուրսներով, ընթացիկ իրականացվել են լսարանային ֆոնդի վերանորոգումներ, որոշ ռեսուրսային բարելավումներ, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքների ձեռքբերումը։ Դրական է դիտարկվում, որ նույն ուղղվածությամբ որոշ խմբեր միավորվել են ծախսարդյունավետության ապահովման համար, իսկ կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկը քոլեջին հնարավորություն կտա վեր հանել ՄԿԾ-ների ինքնածախսածածկման պահանջները, նաև բարելավել ֆինանսական պլանավորման գործիքակազմը։

Անդրադառնալով փաստաթղթաշրջանառության իրականացմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ էլեկտրոնային միասնական համակարգի ներդրումը մեծապես կնպաստի վարչարարության գործընթացների արդյունավետության բարձրացմանը և փաստաթղթաշրջանառության գործընթացի կանոնակարգմանը։

Դրական է, որ քոլեջում գործում են առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններ՝ նպաստելով անվտանգ կրթական միջավայրի ապահովմանը։ Գովելի է, որ քոլեջում պարբերաբար իրականացվում են տարհանման միջոցառումներ, վարժանքներ, ինչը նպաստում է արտակարգ իրավիճակներում ուսանողների տեղեկացվածության բարձրացմանը։ Փորձագիտական խումբն արժևորում է, որ քոլեջը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներին ինտեգրում

է կրթական ծրագրերում՝ փաստելով քոլեջում ներառական կրթության հասանելիության մասին:

Ռեսուրսներից բավարարվածության գնահատման արդյունքներով դրական արձանագրում է, որ ուսանողներն ու դասախոսներն ընդհանուր առմամբ գոհ են համերգային դահլիճների պայմաններից և գրադարանային ծառայություններից: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է ուշադրություն դարձնի ուսանողների և դասախոսների զգալի մասի՝ ցածր բավարարվածություն ունենալուն քոլեջի շենքային, լսարանային ու սպորտդահլիճի պայմաններից: Կարևոր արձանագրում է, որ քոլեջն այդ կարիքը վեր է հանել և դրական միտում է, որ վերջին տարիներին որոշակի ջանքեր է ներդնում նոր գործիքներ ձեռքբերելու համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի ուսումնական միջավայրը նպաստում է կրթական ծրագրերի իրականացմանը, դրամական միջոցները բավարարում են ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար, քոլեջը փորձում է ներգրավել որոշակի ֆինանսական այլընտրանքային աղբյուրներ, առկա են ապահով և անվտանգ միջավայրի ապահովմանն ուղղված միջոցառումներ, ուշադրություն է դարձվում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների կրթության կազմակերպման առանձնահատկություններին, հաստատությունն օգտվում է նաև գործընկեր կազմակերպությունների և բարեգործների միջոցներից, ներդրված են ռեսուրսներից բավարվածության գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի Հանրային կապերի քաղաքականության և ընթացակարգի համաձայն՝ քոլեջը կարևորում է իր գործունեության պատշաճ, հրապարակային, արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը: Փաստաթղթում ներկայացված են հաշվետվողականության շրջանակը, ձևերը, մեթոդներն ու միջոցները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում գործում է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ստորաբաժանումների գործունեության արդյունքներն արտացոլվում են տնօրենի ամենամյա հաշվետվության մեջ՝ ներքևից վերև հաշվետվողականության սկզբունքով: Քոլեջի տնօրենն ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ընդունվող ուսանողների թվաքանակի,

դասախոսական կազմի և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ: Քոլեջի պաշտոնական կայքում տեղադրված են քոլեջի հաշվետվությունները վերջին հինգ տարիների համար: Հաշվետվությունների ուսումնասիրությունը և դրանց համեմատական վերլուծությունը ցույց տվեցին, որ դրանք հիմնականում ունեն նկարագրական և քոլեջի գործունեության, իրականացված միջոցառումների, մրցույթների ու ուսումնական գործընթացի վերաբերյալ քանակական տեղեկատվությունն արտացոլող բնույթ: Հաշվետվություններում ներկայացված են նաև Կարիերայի կենտրոնի գործունեության արդյունքները, որակի ապահովմանն ուղղված աշխատանքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կարիերայի կենտրոնը ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ներկայացնում է նաև եռամսյակային հաշվետվություն մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշվետվություններում վերլուծված չեն գործընթացների չկատարման պատճառները, ինչպես նաև հստակորեն ընգծված չեն նախորդ պլանավորումից սպասվող արդյունքները, պլանավորված, սակայն թերակատարված գործընթացների պատճառները: Հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ դրանք դեռևս չեն ներկայացնում առկա ռիսկերը, դրանց հաղթահարման պլանավորվող ուղիները:

Քոլեջը, ըստ սահմանված կարգի, հաշվետվություններ է ներկայացնում նաև այլ գերատեսչությունների՝ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն (ՄԿՈՒԶԱԿ), Կրթության տեսչական մարմին (ԿՏՄ), Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ) և այլն:

Քոլեջում առկա ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության ապահովման համար կիրառվում է քոլեջի պաշտոնական հայալեզու կայքէջը, որտեղ տեղադրված են քոլեջի գործունեությանն առնչվող հիմնական փաստաթղթերը, կանոնակարգերը, ընդունելության մասին տեղեկատվությունը և ուսանողի ձեռնարկը: Կայքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այստեղ առկա է տեղեկատվություն նաև քոլեջի նախաձեռնությամբ կազմակերպվող մրցույթների, փառատոնների մասին, ինչպիսին է օրինակ Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթ-փառատոնը:

Հարկ է նշել, որ չնայած քոլեջի «Հանրային կապերի քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթղթում առանձնացված են նաև հանրային կապերի պատասխանատուի պարտականությունները, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս հանրային կապերի հաստատման և ապահովման առանձին պատասխանատու քոլեջը չունի: Ըստ քաղաքականության՝ քոլեջի տնօրենը ևս պատասխանատու է հանրային կապերի ապահովման համար:

Պաշտոնական կայքի միջոցով քոլեջն ապահովում է հետադարձ կապը շահակիցների հետ: Կայքջում առկա է համապատասխան բաժին հետադարձ կապի ապահովման համար, ներկայացված է նաև քոլեջի հեռախոսահամարը կապ հաստատելու համար: Քոլեջի կայքի պատասխանատուն կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենն է: Քոլեջը շահակիցների հետ կապի պահպանման համար օգտագործում է նաև ֆեյսբուքյան

հարթակը, որտեղ լուսաբանվում են քոլեջում տեղի ունեցող միջոցառումները, մրցույթները և այլն։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կիրառվող գործիքների արդյունավետության գնահատում և դրա հիմքով տեղեկատվության տարածման ու թափանցիկության ապահովման մեխանիզմների լավարկում քոլեջը դեռևս չի իրականացրել։

Քոլեջի գործող Ռազմավարության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հասարակական պատասխանատվությունը կարևորված է հաստատության կողմից։ Քոլեջում հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման համար իրականացվում են կարճաժամկետ վճարովի դասընթացներ (Դաշնամուր, Լարային գործիքներ, Փողային և հարվածային գործիքներ, Ժողովրդական գործիքներ, Երգեցողություն, Երգչախմբավարություն)։ Դրանք միտված են ձևավորելու մասնագիտական երաժշտական գիտելիքներ և կարողություններ։ Մշակութային արժեքների փոխանցմանն են միտված նաև հաստատության կողմից կազմակերպվող մրցույթները, փառատոնները, վարպետաց դասերը։ Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի ուսանողները մասնակցում են հասարակական նախագծերի և տարածքային, համաքաղաքային միջոցառումների, որտեղ հանդես են գալիս համերգային ելույթներով։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործող հաշվետվողականության համակարգը թույլ է տալիս ապահովել քոլեջի գործընթացների, ընթացակարգերի հասանելիությունը հասարակությանը։ Պետական գերատեսչություններին ներկայացվող հաշվետվությունների միջոցով քոլեջն ապահովում է նաև հաշվետվողականությունը պետության առջև։ Այս համտեքստում փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի ներառումը, պլանավորման և հաշվետվողականության գործընթացների փոխկապակցումը կդարձնեն հաշվետվություններն առավել կիրառելի գործիք հաստատության համար՝ նպաստելով հաշվետվողականության գործընթացների լավարկմանը։ Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ քոլեջի կողմից որակական վերլուծությունների իրականացումը, դրանց տվյալների ներդրումը հետագա բարելավման գործողությունների հիմքում կարող են հանգեցնել կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը։

Կարևորելով քոլեջի քաղաքականությունը հանրային կապերի հաստատման և քոլեջի գործունեության հրապարակայնության ապահովման տեսանկյունից՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից PR ռազմավարության մշակումն ու գործարկումը կարող են նպաստել քոլեջի գործունեության մասին հասարարակության առավել լայն շերտերի իրազեկմանը։ Այս տեսանկյունից կարևոր կարող է լինել նաև համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսների հատկացումը՝ Հանրային կապերի քաղաքականության դրույթների լիարժեք իրագործման համար։

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի պաշտոնական կայքէջի միջոցով քոլեջի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթային հենքի ներկայացումը, իրականացվող միջոցառումների լուսաբանումը, ինչը հնարավորություն է տալիս արտաքին

շահակիցներին տեղեկանալ քոլեջի նախաձեռնությամբ կազմակերպվող միջոցառումների մասին: Այսուհանդերձ, հաշվի առնելով նաև քոլեջի դերակատարությունը Բաբաջանյանական երաժշտությունը և ազգային մշակույթը միջազգային հանրույթին ներկայացնելու հարցում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ առկա տեղեկատվության ներկայացումը անգլերենով կարող է կարևոր լինել քոլեջի նախաձեռնությունների մասին իրազեկելու հարցում:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ քոլեջը ստեղծել է հնարավորություններ հետադարձ կապի ապահովման համար՝ կիրառելով կայքի և ֆեյսբուքյան էջի հնարավորությունները: Այս տեսանկյունից կիրառվող գործիքների արդյունավետության գնահատումը և շահակիցների կարիքների հիման վրա այս գործիքների լավարկումը կարող են նպաստել հետադարձ կապի ավելի կայուն մեխանիզմների ներդրմանը և ընդլայնել արտաքին շահակիցների հետ կապի հաստատման հնարավորությունները:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում քոլեջի դերը հասարակությանը արժեքների փոխանցման նպատակով և գտնում, որ քոլեջի կողմից իրականացվող միջոցառումները նպաստում են երաժշտական ճաշակի ձևավորմանը: Հաշվի առնելով քոլեջի դասավանդող կազմի մեծ փորձառությունն ու ուսանողների ներուժը՝ քոլեջը կարող է ընդլայնել իրականացվող միջոցառումների շրջանակը, ինչի միջոցով կմեծանա նաև քոլեջի մասին իրազեկվածության մակարդակը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա է հաշվետվողականության համակարգ, քոլեջն ապահովում է հաշվետվողականությունը պետության և հասարակության առաջ, փորձում է կատարելագործել իրականացվող գործընթացների թափանցիկության ապահովման մեխանիզմները, առկա են հասարակության հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմեր, իրականացվում են հասարակությանն արժեքների փոխանցման միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բվարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջի տեսլականում որպես առանձին կետ առանձնացված է քոլեջի միջազգայնացման խթանումն ու զարգացումը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՌԾ-ով սահմանված հասարակայնության հետ կապերի և հանրային պատասխանատվություն նպատակի համատեքստում ևս կարևորվել է արտաքին կապերի զարգացումը և հաստատության միջազգայնացման գործընթացը, որի շրջանակում քոլեջը

արտաքին կապերի համակողմանի զարգացումը համարում է շարունակական գործընթաց, նախատեսել է ընդլայնել գործընկերային համագործակցությունը երաժշտության ոլորտի հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ: Հարկ է նշել, որ քոլեջը Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթի ավանդույթի պահպանումն ու զարգացումը համարում է քոլեջի միջազգայնացմանը միտված կարևոր գործընթաց: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները համակարգում են կարիերայի պատասխանատուն և ՈԱԲ ղեկավարը, բացի այդ միջազգային համագործակցություններում գործընկերային կապեր հաստատելու համատեքստում մեծ է քոլեջի տնօրենի դերակատարումը: Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ ՌԾ-ով սահմանված վերոնշյալ դրույթների շրջանակում քոլեջն ապահովել է միջազգային մրցույթ-փառատոնների պարբերականությունը, նոր միջազգային համագործակցությունների ձեռքբերումը, Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթի կազմակերպումը՝ նվիրված կոմպոզիտորի 100 ամյակին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ փորձի փոխանակման և գործընկերային համագործակցությունները զարգացնելու նպատակով հանրապետության նմանատիպ հաստատությունների հետ քոլեջը ձևավորել է համագործակցային միջավայր: Մասնավորապես՝ վերջին 10 տարիներին մասնակցություն է ցուցաբերել մասնագիտական կրթության ոլորտում ՊԿՉ-ների, ՄԿԾ-ների մեթոդաբանության մշակման գործընթացին, տարբեր հաստատությունների մասնագետների հետ ձևավորվել է երկխոսության հարթակ՝ մոդուլային ծրագրերի, թեմատիկ պլանների, ուսումնական պլանների, պլան ժամանակացույցների, դասացուցակների կազմման, դասավանդման և գնահատման մեթոդաբանության, ներքին փաստաթղթերի ձևաչափերի հետ կապված փորձի փոխանակման համատեքստում: Առցանց տարբերակով ուսումնասիրել են Եվրասիական կրթատարածքի նմանատիպ հաստատությունների կրթական ծրագրերը, կառավարման, հաշվետվողականության և կրթության կազմակերպմանն ու իրականացմանը վերաբերող մոտեցումները՝ վերանայել են արտասահմանյան երաժշտական գրականության կառուցվածքն ու բովանդակությունը, անսամբլային առարկաների դասավանդման, բաշխման և տեղակայման հարցերը: Քոլեջը համագործակցում է երաժշտության ոլորտի ներկայացուցիչների հետ (Տիգրան Մանսուրյան, Արամ Սաթյան, Լևոն Մուրադյան, Առնոլդ Քոչարյան և այլոք)՝ նրանց մասնակցությամբ կազմակերպելով վարպետաց դասեր:

Քոլեջը համագործակցում է երևանյան 6 երաժշտական դպրոցի հետ, որոնց հետ կազմակերպվում են պրակտիկաները, բացի այդ երաժշտական դպրոցների հետ ձևավորվել է կայուն համագործակցային միջավայր՝ դասավանդողներն իրենց մասնագիտական գործունեությունը ծավալում են և՛ քոլեջում, և՛ երաժշտական դպրոցներում, երաժշտական դպրոցների ներկայացուցիչներն ընդգրկված են ԿԽ-ում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ զբաղմունքի նկարագրերով առանձնացված այլ պրակտիկաների վայրերի հետ, ինչպես օրինակ համույթներ, երգչախմբեր, երաժշտաարավեստի կազմակերպություններ,

երաժշտաարվեստի ոլորտում գործող ՊՈԱԿ-ներ (Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ, Կամերային երաժշտության ազգային կենտրոն, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Հայաստանի պետական ֆիլհարմոնիա, Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ) քոլեջը համագործակցությունների շրջանակ դեռևս չի ձևավորել:

Մրցույթները, փառատոնները ևս քոլեջին հնարավորություն են տալիս համագործակցային շրջանակ ձևավորելու, բարձրացնելու քոլեջի միջազգային ճանաչելիությունը: Այսպես օրինակ, քոլեջը վերջին 5 տարիներին մասնակցել է թվով 35 միջազգային մրցույթ-փառատոնների, որոնք տեղի են ունեցել 20 տարբեր երկրներում: Քոլեջի կողմից կազմակերպվել է թվով 11 միջազգային մրցույթ-փառատոն, որոնք տեղի են ունեցել Երևանում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մրցույթների ժամանակ իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն, հետագայում լավագույն փորձի ներդրման նպատակով, ինչպես օրինակ Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների միջազգային մրցույթ-փառատոնը, որը ստեղծագործական ուղի է հարթում երիտասարդ կատարողների շրջանում: Մի շարք միջազգային մրցույթներ և մրցույթ-փառատոններ են կազմակերպվել քոլեջի և «Կամերտոն» մշակութային ՀԿ-ի համագործակցության արդյունքում: Հարկ է նշել, որ «Կամերտոն» մշակութային ՀԿ-ն հիմնված է քոլեջի դասախոսական ներուժի վրա, որի շրջանակում քոլեջը համագործակցում է արտերկրի հեղինակավոր մասնագետների հետ՝ ներգրավելով նրանց ժյուրիի կազմում: Մրցույթի շրջանակում քոլեջը համագործակցում է Դիլիջանի UWC DILIJAN COLLEGE միջազգային դպրոցի, Երևանի Ա. Սպենդիարյանի անվան մասնագիտական երաժշտական դպրոցի, Երևանի Կ.Սարաջյանի անվան երաժշտական դպրոցի հետ: Մրցույթներին մասնակցություն են ունենում տարբեր երկրների պատանի և երիտասարդ կատարողներ: Քոլեջի ուսանողները միջազգային մրցույթներին արժանանում են տարբեր մրցանակների, մասնավորապես 2022-2023 ուստարվա ընթացքում մրցույթներին մասնակցություն ցուցաբերած 88 ուսանողից 82-ը զբաղեցրել են մրցանակային տեղեր: Քոլեջի դասախոսները ևս ներգրավված են տարբեր միջազգային նախագծերի՝ ժյուրիի նախագահ, անդամ կարգավիճակով: Մրցույթներին, միջազգային փառատոներին և այլ նախագծերին ու միջոցառումներին քոլեջի մասնակցությունը ֆինանսավորվում է միջազգային գործընկեր կազմակերպությունների կողմից:

Քոլեջը միջազգային նմանատիպ հաստատությունների հետ ևս ունի համագործակցային պայմանագրեր, ինչպես օրինակ Էստոնիայի Տարտուի երաժշտական քոլեջի, Գնեսինների անվան երաժշտական քոլեջի, Ուրֆայի Զագիր Իսմագիլովի անվան արվեստի պետական ինստիտուտի, Մայամիի համալսարանի հետ: Վերջին համագործակցություններից կարելի է նշել 2023թ. Գերմանիայի Մուլակեռ Գուտմանի երաժշտական դպրոցի հետ համաձայնագիրը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշյալ հաստատությունների հետ քոլեջի համագործակցության շրջանակը ներառում է երկուստեք մշակութային գործունեության ծանոթացում, ուսումնասիրություն, կրթական ծրագրերի ու պլանների համադրություն, մեթոդական, ուսուցողական նյութերի և

նորությունների փոխանակում, վարպետաց դասերի իրականացում: Հարկ է նշել, որ քոլեջը դեռևս կրթական ծրագրերի և պլանների համադրության արդյունքում ՄԿԾ-ների բարելավումներ չի իրականացրել, բացի այդ՝ նշյալ համագործակցությունները նոր ռեսուրսների ներգրավում, առկա ռեսուրսային բազայի լավարկում չեն նախատեսում:

Ըստ քոլեջի ներկայացրած տվյալների վարչական աշխատողների 86,3%-ը տիրապետում է ռուսերերենին, 18,1%-ը՝ անգլերենին, ուսումնաօժանդակ կազմի 66.6%-ը՝ ռուսերերենին, 44.4%-ը՝ անգլերենին: Ինչ վերաբերում է դասախոսներին, ապա նրանց շուրջ 88%-ը տիրապետում է ռուսերենին, իսկ անգլերենին՝ 21,4%-ը: Ուսանողներն ավելի լավ են տիրապետում անգլերենին՝ 85%-ից ավելի, նաև ռուսերենի իմացությունն է 80%-ի շրջանակում: Հատկանշական է, որ «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» մասնագիտության «Լարային գործիքներ» մասնագիտացման ուսանողների շուրջ 30%-ը տիրապետում է պարսկերենին, իսկ «Երգեցողություն» մասնագիտության ուսանողների 100%-ը տիրապետում է իտալերենին՝ որպես մասնագիտական գործունեության իրականացման կարևոր գործիք: Քոլեջն օտար լեզուների դասընթացների կազմակերպման նպատակով լեզվաիմացության տարբերակման անհրաժեշտությունն է դիտարկել, սակայն, պայմանավորված ռեսուրսների սղությամբ, լրացուցիչ դասընթացներ ըստ լեզվիմացության մակարդակների չեն իրականացվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խնդիրը բարձրաձայնվել է նաև ԿԽ-ում, սակայն համարժեք լուծումներ դեռևս չեն տրվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի և վարչական աշխատակիցների՝ անգլերենի իմացության պակասը խոչընդոտում է նաև շարժունության ծրագրերին դիմելուն, մասնավորապես էրազմուս+ ծրագրերում ներգրավվելուն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից են, որի շրջանակում քոլեջը նախատեսել է երաժշտության ոլորտի հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ ընդլայնել գործընկերային համագործակցությունը՝ նպաստելով արդյունավետ համագործակցությունների գործարկմանը: Նշյալի համատեքստում փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի զարգացնել գործընկերությունը երաժշտաարվեստի գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ, ինչը հնարավորություն կտա բարձրացնել քոլեջի մասնագիտական գրավչությունը, ինչպես նաև կնպաստի ուսանողների մասնագիտական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնմանը:

Գովելի է, որ քոլեջը պարբերաբար մասնակցում է միջազգային մրցույթ-փառատոնների, ուր ուսումնասիրում է միջազգային փորձը՝ նպատակ ունենալով հետագայում ներդնել լավագույն փորձը ուսանողների կատարողական հմտությունների զարգացման նպատակով: Գնահատելի է, որ քոլեջը երաժշտաարվեստի տարբեր կազմակերպությունների, երաժշտական դպրոցների, ինչպես նաև դասախոսական ներուժի ներգրավմամբ համատեղ իրականացնում է տարբեր մրցույթներ, փառատոններ՝

համագործակցելով արտերկրի հեղինակավոր մասնագետների հետ, ինչը ևս հնարավորություն է տալիս ժամանակակից երաժշտարվեստի լավագույն փորձին ծանոթանալու։ Նաև դրական արձանագրում է, որ քոլեջի դասախոսները ևս ընդգրկված են տարբեր միջազգային նախագծերի՝ որպես ժյուրիի նախագահ, անդամ։ Վերոնշյալն ուղղակիորեն նպաստում է նոր միջազգային համագործակցությունների ձեռքբերմանը և քոլեջի դրական վարկանիշի ձևավորմանը։ Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջի ուսանողների շուրջ 22% -ը մասնակցում են միջազգային մրցույթ-փառատոններին և զբաղեցնում մրցանակային տեղեր, ինչը դրականորեն է անդրադառնում համագործակցային կրթական միջավայրի զարգացման վրա։

Դրական է, որ հանրապետության նմանատիպ հաստատությունների հետ քոլեջը ձևավորել է համագործակցային միջավայր՝ մասնակցելով մասնագիտական կրթության ոլորտում ՊԿՉ-ների, ՄԿԾ-ների մեթոդաբանության, ձևաչափերի մշակման գործընթացին, ինչը պայմանավորել է տարբեր հաստատությունների մասնագետների հետ երկխոսության հարթակի և փորձի փոխանակման մշակույթի ձևավորումը։ Թեև առցանց տարբերակով դիտարկվել են Եվրասիական կրթատարածքի նմանատիպ հաստատությունների կրթական ծրագրերը, կառավարչական գործընթացներն ու մեխանիզմները, այդուհանդերձ դրանց ներդրման դեպքեր առկա չեն, ինչը կարող էր խթանել շարժունության ծրագրերի իրականացումը։

Ողջունելի է, որ քոլեջի գործընկերային համագործակցությունները ներառում են նաև վարպետաց դասերի կազմակերպում երաժշտության ոլորտի հայազգի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ խթանելով ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացումն ու հայ երաժշտության արվեստի տարածումը։ Համագործակցային կրթական հարաբերությունների ձևավորման շրջանակում փորձագիտական խումբը կարևորում է երաժշտական դպրոցների հետ իրականցվող պրակտիկաների կազմակերպումը, նրանց ներկայացվածությունը ԿԽ-ում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում, սակայն միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ զբաղմունքի նկարագրերով առանձնացված պրակտիկաների այլ վայրերի ընտրությունը կարող է զարգացել ուսանողների մասնագիտական կարողությունները և մանսանգիտական դաշտում իրացվելու հնարավորություններ ստեղծել։

Դրական է, որ քոլեջն ընդլայնում է իր միջազգային գործընկերային ցանցը և միջազգային նմանատիպ հաստատությունների հետ առկա են համագործակցային պայմանագրեր։ Թեև այդ պայմանագրերն ընդգրկում են երկուստեք մշակութային գործունեության ծանոթացման, կրթական ծրագրերի համադրության, մեթոդական, ուսուցողական նյութերի և նորությունների փոխանակման դրույթներ, այդուհանդերձ կրթական ծրագրերի և պլանների համադրության արդյունքում ՄԿԾ-ների լավարկումներ չեն իրականացվել, հետևաբար անհրաժեշտություն կա գործարկել կնքված պայմանագրերով նախատեսված գործողությունները, ինչի արդյունքում քոլեջը կունենա համանման կրթական ծրագրերի հետ համահունչության ապահովման հիմքեր, լրացուցիչ նախադրյալներ կստեղծվեն ուսանողների շարժունության իրականացման համար։

Ողջունելի է, որ քոլեջի ուսանողների անգլերենի իմացության մակարդակը բավականին բարձր է, ավելին՝ առկա 2 մասնագիտությունների ուսանողները տիրապետում են իտալերեն, պարսկերեն լեզուների, ինչը կարևոր և ուսանողներին մասնագիտական առավելություն հաղորդող հանգամանք կարող է լինել: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն ուշադրություն դարձնի նաև ՊԴ, վարչական կազմերի լեզվաիմացության մակարդակի բարձրացմանը, ինչը կնպաստի միջազգային փորձի ուսումնասիրման հնարավորությունների ստեղծմանն ու դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը համարում է ռազմավարական առաջնահերթություն, պարբերաբար կազմակերպում և մասնակցում է միջազգային մրցույթ-փառատոնների, միջազգային մրցույթների շրջանակներում համագործակցում է միջազգային քոլեջների հետ, երաժշտական դպրոցների, նմանատիպ ՄԿՈ հաստատությունների հետ ձևավորել է համագործակցային միջավայր և փորձի փոխանակման մշակույթ, վերջին տարիներին ընդլայնել է միջազգային գործընկերային ցանցը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Որակի ապահովման աշխատանքները քոլեջում մեկնարկել են 2011թ.-ից: Քոլեջի որակի ապահովման գործընթացների հիմքում ընկած է 2019թ. հաստատված որակի ապահովման քաղաքականությունը: ՈԱ քաղաքականությամբ սահմանավում է Որակի կառավարման նպատակը, այն է՝ ապահովել մասնագիտական երաժշտական կրթության ժամանակակից ծրագրեր՝ բավարար և անհրաժեշտ ռեսուրսներով, ինչպես նաև զարգացնել ուսուցման և ուսումնառության որակը՝ խթանելով երաժշտական կրթության առաջընթացը: Սահմանվել են նաև որակի ապահովման մարմինները՝ Կառավարման խորհուրդ, ստորաբաժանումներ, վարչատնտեսական ստորաբաժանում, ատեստավորման հանձնաժողով կամ ամփոփիչ գնահատման հանձնաժողով, որակի ապահովման բաժին (այսուհետ՝ ՈԱԲ): ՈԱ քաղաքականությամբ սահմանվում է, որ ՈԱԲ-ը կառուցվածքային կապող օղակ է, պատասխանատու է ներքին կառավարման, ուսուցման, ուսումնառության, կադրերի ներգրավման, խրախուսման, կրթական ծրագրերի բարելավումների, մշտադիտարկումների, ուսանողների և կադրերի գնահատման աշխատանքների պատշաճ և

պարբերաբար կազմակերպման, արդյունքների ամփոփման, առաջարկությունների ներկայացման համար, ինչպես նաև բաժինը պատասխանատու է արտաքին գնահատումների, ինքնավերլուծության իրականացման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնականում ՈԱԲ-ն իրականացնում է հիմնականում ուսումնամեթոդական գործունեություն: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ բաժինը ՊԿՉ-ների ներդրման, իրականցման գործընթացի վերաբերյալ ներկայացրել է հաշվետվություններ ՀՀ ԿԳՄՍ: Հարկ է նշել, որ բաժինի գործունեության ընթացքում քոլեջն անցել է ռազմավարական մի քանի շրջափուլ, այդուհանդերձ որակի ապահովման գործուն մեխանիզմներ, գործիքակազմ դեռևս չի ներդրվել, ինչպես նաև տեղի ունեցող փոփոխությունները դեռևս չեն հիմնվում որակի ապաոհովման համակարգի կողմից հավքագրված տվյալների վրա:

ՈԱԲ գործունեության հիմքում ընկած են կիսամյակային պլանավորումները: ՈԱԲ պլանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2018-2019 ուսումնական տարվանից մինչև 2022-2023 ուսումնական տարիների կիսամյակային պլանավորումները հիմնակաանում նույնական են՝ հիմքում չունենալով նախորդ ուսումնական տարվա և/կամ համապատասխան կիսամյակում ՈԱ գործընթացների արդյունքները: Ըստ տարիների բաժնի պլանների ուսումնասիրությունից և համադրությունից պարզ դարձավ, որ նշյալ ժամանակահատվածում ՈԱԲ կիսամյակային պլանների միջև բովանդակային տարբերություններն աննշան են, օրինակ՝ 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի պլանավորումն 2-րդ կիսամայկի պլանավորումից տարբերվում է 3 կետով /Աշխատել ֆոկուս խմբերի հետ, իրականացնել ՌԾ մոնիտորինգ, վերանայել ուսանողի գիտելիքի գնահատման ամփոփաթերթերը, դասալսումների գնահատման ձևաչափերը, քննական հանձնաժողովի անդամների հաշվետվության ձևաչափը, դասախոսի գնահատման հարցաթերթերը/, որոնք իրենց հերթին ընդհանուր առմամբ ունեն բովանդակային ընդհանրություններ մնացյալ կետերի հետ: 2019-2020 1-ին կիսամայկի պլանավորումը 2-րդ տարբերվում է 1 կետով /ՌԾ մոնիտորինգ/, իսկ 2020-2021, 2021-2022, 2022-2023 կիսամայակային պլանավորումները նույն են, առկա չեն փոփոխություններ: 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամայակի պլանավորումը տարբերվում է մեկ կետով՝ պատրաստվել 2023 թվականի նախատեսվող ինստիտուցոնալ հավատարմագրմանը՝ կազմելով ինստիտուցոնալ ինքնավերլուծական զեկույցի և հավատարմագրման գործընթացի շրջանակներում առաջադրված աղյուսակների լրացման աշխատանքներ: Փորձագիտական այցի ընթացքում 2023-2024 ուսումնական տարվա ՈԱԲ կիսամյակային պլան չի ներկայացվել: ՈԱԲ-ի կողմից ըստ պլանավորված գործընթացների վերլուծական հաշվետվություններ առկա չեն: ՈԱ գործընթացների վերաբերյալ ընդհանարական տեղեկատվություն ներկայացված է 2018, 2019, 2020թթ. հաշվետվությունների մեջ, 2021թ. հաշվետվության մեջ ՈԱ գործընթացները ներկայացված չեն, իսկ 2022թ. հակիրճ ներկայացվում են որակի մշակույթի տարածման աշխատանքները /ոչ հստակ դեպքերով և օրինակներով/ և քոլեջի նախապատրաստական աշխատանքները մեկնարկվող ինստիտուցոնալ հավատարմագրման համար համար /2022թ. նոյեմբեր/: Հարկ է նշել նաև, որ ՈԱ կիսամյակային պլանավորումների և հաշվետվությունների

միջև եղած կապը թույլ է, բացի այդ մեկ կիսամյակից մյուս կիսամյակ պլանավորումների հիմքում որակական վերլուծություններ դրված չեն: ՈԱ կիսամյակային պլանավորումները չեն բխում ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակներից և խնդիրներից, ինչպես նաև այն գործընթացներից, որոնց իրականացման համար պատասխանատու է նաև ՈԱԲ-ը:

Տնօրինական խորհրդի 2022թ. դեկտեմբերի 28-ի նիստով հաստատվել է քոլեջի որակի ապահովման ձեռնարկը: Այն իր մեջ ներառում է ՈԱ քաղաքականությունը, ՌԾ-ով սահմանված առաքելությունը, տեսլականը և արժեքները: Ձեռնարկի ուսումնասիրությունի պարզ դարձավ, որ քոլեջի որակի ապահովման գործընթացների, մեխանիզմների և մի շարք այլ գործընթացների վերաբերյալ տեղեկություն առկա չէ ձեռնարկում: ՈԱ քաղաքականության և ՈԱ ձեռնարկի միջև չկան բովանդակային տարանջատումներ և ըստ կիրառման նպատակների տարբերություններ:

Գործող ՈԱ ընթացակարգերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք չեն անդրադառնում քոլեջում առկա հիմնական բոլոր գործընթացներին/ոլորտներին, օրինակ՝ հարցումները ներքին շահակիցների շրջանում ժամանակային և բովանդակային առումով համակարգված և կանոնակարգված ինստիտուցիոնալ բնույթ չեն կրում, իսկ արտաքին միջավայրի գնահատման և վերլուծման նախադեպեր գրեթե առկա չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացված հարցումների արդյունքները տնօրինական խորհրդի ժամանակ քննարկվում են, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տնօրինական խորհրդի արձանագրություններում արտահայտված չեն ՈԱ հարցումները և դրանց արդյունքները: Վերջին տարիների ընթացքում հարցումները կանոնակարգված ձևով չեն իրականացվում: 2022-2023 ուսումնական տարում իրականացվել է քոլեջի ընդհանուր գնահատում դասախոսական և ուսանողական համակազմի շրջանում, առկա են տվյալներն ամփոփող գծապատկերներ, սակայն հարցման արդյունքների ամփոփ վերլուծություններ առկա չեն: Հարցումների իրականացման ոլորտներն ընդգրկում են տարբեր ուղղությունները՝ ուսումնական միջավայր, շրջանավարտների, գործատուների կարիքներ և այլն:

Նախկինում իրականացվել են հարցումներ նաև ծնողների շրջանում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականացվել են նաև Ֆոկուս-խմբային քննարկումներ, սակայն դրանք չեն վերլուծվել: Ֆոկուս խմբային հանդիպումները վերջին տարիներին չեն եղել: Մինչ այս իրականացված հարցումների արդյունքները և դրանց հիման վրա տեղի ունեցած փոփոխությունները դեռևս տեսանելի չեն:

Հարցումներն հիմնականում իրականացվել են կարիերայի կենտրոնի գործունեության շրջանակներում: 2019 թ. տնօրենի ամենամյա հաշվետվության մեջ նշվում է, որ նոյեմբեր ամսին տեղի են ունեցել հանդիպումներ ֆոկուս-խմբային ձևաչափով դասախոսական և ուսանողական համակազմի հետ / 2 դասախոսական և 2 ուսանողական խումբ/, սակայն հանդիպումների վերլուծություններ առկա չեն: Քոլեջն ունի որակի ապահովման տարր հանդիսացող հարցման գործիքներ, սակայն դրանք համակարգված չեն՝ ըստ կիրառման նպատակների, քոլեջի համար ռազմավարական նշանակության ոլորտների: Քոլեջի թիրախային գործընթացների արդյունավետության գնահատման վերաբերյալ արժանահավատ տվյալներ չեն հավաքագրում: ԻՎ-ում, ինչպես նաև փորձագիտական այցի

ժամանակ նշվեց, որ այս խնդիրը գալիս է շահակիցների տեղեկացվածությունից և որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ընկալումներից, ինչ արդյունքում գործող մի շարք գործիքներ նախատեսվում են վերանայվել՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը և գործարկման արդյունքները:

2013թ.-ից կրթության որակի պատասխանատուի հաստիքը գործել է կես դրույքով, որից հետո մեկ դրույքով, այժմ՝ կրկին կես դրույք /ՈԱԲ ղեկավար/: ՈԱԲ-ն ունի նաև հասարակական հիմքունքներով աշխատող 1 աշխատակից: ՈԱԲ ղեկավարն ունի պաշտոնի հրահանգ, սակայն աշխատակցի պաշտոնի հրահանգ մշակված չէ: ՈԱ քաղաքականությամբ և ՈԱԲ ղեկավարի պաշտոնի հրահանգով սահմանված գործառույթներն ունեն համադրելիության խնդիր. ՈԱ քաղաքականությամբ ՈԱԲ գործունեությունը ընդգրկուն է, մասնավորապես՝ ՈԱԲ ղեկավարը ընդգրկված է քոլեջի տարբեր գործընթացներում: ՈԱԲ ղեկավարի պաշտոնի հրահանգով սահմանված գործառույթներն առավել նեղ և թիարախավորված են: ՈԱԲ-ն ունի աշխատասենյակ, որը կիսում է կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի հետ: ՈԱԲ ղեկավարին կես դրույքի համար տրվող աշխատավարձից բացի ֆինանսական այլ ներդրումներ որակի ապահովման գործընթացներում առկա չեն: ՈԱԲ աշխատակիցները սեփական նախաձեռնությամբ անցել են վերապատրաստումներ՝ կազմակերպված ՈԱԱԿ-ի կողմից: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Որակի ապահովման համակարգի առջև դրված են ռազմավարական նպատակներ և խնդիրներ, որոնք բավական ծավալուն են և պահանջում են մարդկային ռեսուրսներ: Այդպիսիք են օրինակ՝ երաժշտական կրթական ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու կարողությունների բարձրացման երաշխավորությունների մշակման և կատարելագործման նպատակով գործատու կազմակերպությունների և քոլեջի շրջանավարտների կարծիքների գնահատմամբ իրականացնել երաժշտական կրթական ծրագրերից նրանց բավարարվածության աստիճանի վերաբերյալ համալիր հետազոտություն և վերլուծություն, ապահովել քոլեջի ներքին և արտաքին շահակիցների համար, ինչպես նաև սովորողների մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում, վերանայել և կատարելագործել ուսուցումից ուսանողների բավարարվածության գնահատման չափանիշները և այլն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ներքին շահակիցների պահանջների/կարիքների վերլուծությունը, դրանց վերաբերյալ տվյալները հիմնականում արտացոլված չեն խորհուրդների արձանագրություններում: Քոլեջն իրականացնում է որոշ աշխատանքներ նաև արտաքին շահակիցների հետ, մասնավորապես համագործակցում է ծնողների հետ՝ նպաստելով ուսանողների արդյունավետ ուսուցման: Գործատուների հետ ֆոկուս-խմբային հանդիպումներ, քննարկումներ վերջին տարիների ընթացքում չեն եղել: ԻՎ-ում քոլեջը փաստում է, որ որակի ապահովման համակարգի վերանայման անհրաժեշտություն չի դիտարկվել, քանի որ կախված վիճակից տեղի են ունենում մասնակի փոփոխություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման մոտեցմանը հանգելու համար ՈԱ համակարգի արդյունավետության գնահատման վերլուծություններ չեն

իրականացվել: Քոլեջի կողմից ներկայացված փաստաթղթային հենքի ուսումնասիրությունից, ինչպես նաև փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի ապահովման համակարգի առջև դրված մի շարք խնդիրներ չեն ենթարկվել համապարփակ վերլուծության, ինչպես օրինակ՝ արժանահավատ տվյալների հավաքագրում, որակական վերլուծություն և ներկայացում համապատասխան ստորաբաժանման և/կամ կառավարման օղակ, որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածության բարձրացում /սեմինարներ, վերապատրաստումներ կապված ՈԱ-ում հստակ իրենց դերի, մասնակցության և ազդեցության հետ/, ՈԱ մի շարք գործիքների արդյունավետության գնահատում և բարելավում /պլանավորման փուլում են/, արտաքին միջավայրի համապարփակ գնահատման մեխանիզմների մշակում, ՈԱ գործընթացների համակարգման համար մարդկային ռեսուրսների պարտականությունների վերաբաշխում, հստակեցում և այլ:

Քոլեջն ինստիտուցոնալ հավատարմագրման նպատակով իրականացրել է ինքնավերլուծություն, որն առավելապես տեղեկատվական, նկարագրական բնույթ ունի, սակավ են որակական բնույթի վերլուծությունները: Ինքնավերլուծության իրականացման ընթացքում գործընթացները համակարգվել են ՈԱԲ-ի կողմից, մնացյալ ստորաբաժանումները տրամադրել են համապատասխան տեղեկություն իրականացվող գործընթացների մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները տեղեկացված են ինքնավերլուծության գործընթացներից, իսկ արտաքին շահակիցները՝ ոչ այդքան: Քոլեջի կայքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ փորձագիտական այցից հետո ինքնավերլուծությունը հասանելի է պաշտոնական կայքում:

Որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը ներկայացվում է քոլեջի ամենամյա հաշվետվության մեջ, որը տեղադրվում է պաշտոնական կայքէջ, ՈԱ ձեռնարկը ևս հասանելի է կայքէջում, ինչպես նաև կայքում են տեղակայված Կարիերայի կենտրոնի կողմից իրականացված հարցումների որոշ հղումներ: Կայքում որակի ապահովման գործընթացների արդյունքների մասին ամբողջական տեղեկատվություն առկա չէ: Իրականացված գործընթացների մասին տեղեկատվությունը ներքին շահակիցների շրջանում տարածվում է քննարկումների միջոցով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը, ռազմավարական տարբեր շրջափուլերում կարևորելով ՈՆԱ համակարգի ստեղծումը և բարելավումը, մշակել է ՈՆԱ գործընթացները համակարգող և կանոնակարգող փաստաթղթեր, ինչը հնարավորություն է տվել որոշակի հիմքեր ստեղծելու որակի ապահովման համակարգի ներդրման համար: Այսուհանդերձ մտահոգիչ է, որ ՈՆԱ գործընթացները դեռևս ինստիտուցիոնալ մակարդակում կանոնակարգված տեղի չեն ունենում, ինչը վտանգում է որակի ապահովման քաղաքականության լիարժեք իրականացումը և չի նպաստում արժանահավատ տվյալների հավաքագրմանը, ներքին ու արտաքին միջավայրերի վերլուծությանը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը գտնում է, որ ՈԱ քաղաքականությամբ սահմանված գործընթացների պարբերական ու

լիարժեք իրականացումը, շահակիցների կարիքների վերհանումը և դրանց հիմքով վերլուծությունների իրականացումը կարող են նպաստել նաև կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը՝ հավաստի տվյալներ տրամադրելով կառավարչական որոշումների կայացման համար: ՈԱ գործընթացների արդյունավետության բարձրացմանը կարող են նպաստել նաև առկա հաշվետվությունների արդյունքների վերլուծության արդյունքում պլանավորման գործընթացների բարելավումը՝ փոխկապակցելով կարիքների վերհանումը բարելավման հետագա գործողությունների հետ:

Հաշվի առնելով, որակի ապահովման համակարգի առջև դրված խնդիրների ընդգրկուն լինելը, ՈԱ պատասխանատուների ներգրավվածությունը նաև ուսումնամեթոդական, կրթական ծրագրերի մշակման ու վերանայման աշխատանքներում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարիք ունի գնահատելու այս ուղղությամբ տրամադրվող մարդկային ու նյութական ռեսուրսների համապատասխանությունը նախատեսված գործառութային շրջանակին, ինչը կնպաստի պատասխանատվությունների օպտիմալ բաշխմանը: Որակի ապահովման համակարգի առջև դրված խնդիրների հստակեցումը, գործունեության գնահատման ցուցիչների սահմանումը ևս կարող են կարևոր լինել ակնկալվող արդյունքներն առավել իրատեսական, իսկ համակարգի գործունեությունն ավելի թիրախային ու արդյունահենք դարձնելու համար:

Անդրադառնալով քոլեջում կիրառվող որակի ապահովման գործիքներին ու մեխանիզմներին՝ փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը քայլեր իրականացրել է բարելավելու կիրառվող գործիքները, նոր մեխանիզմներ ներդնելու, սակայն դրանց ոչ պարբերական կիրառումը, հավաքագրված տվյալների արժանահավատ չլինելը քոլեջի համար՝ պայմանավորված նաև մեթոդաբանական խնդիրներով, դեռևս չեն նպաստում ներքին և արտաքին շահակիցների կարիքների համակողմանի վերհանմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ահրաժեշտություն ունի նաև որակի ապահովման պլաններում հստակեցնելու կարիքների գնահատման համար կիրառվող գործիքները, կանոնակարգելու դրանց կիրառման և արդյունքների վերլուծության պարբերականությունը, ինչպես նաև շահակիցների շրջանակը: Նշված քայլերի իրականացումը կհանգեցնի որակի ապահովման համակարգի ամբողջական ներդրմանը քոլեջում և որակի մշակույթի ձևավորմանն ու տարածմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ներքին շահակիցները /վարչական կազմ, դասախոս, ուսանող/ որոշ չափով ընգրկված են ՈԱ գործընթացներում, սակայն արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՈՆԱ գործընթացներում դեռևս տեսանելի չէ: Արտաքին շահակիցների ներգրավվածությունը կնպաստի քոլեջ-աշխատաշուկա կապի ամրապնդմանը և երաժշտական ոլորտի արդի պահանջների արտացոլմանը մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակում, ինչպես նաև քոլեջի գործունեության հիմնական այլ ոլորտներում:

Փորձագիտական խմբի համար տեսանելի է ըստ տարիների ՈՆԱ գործընթացների համակարգման համար փաստաթղթային հենքի ձևավորումը, սակայն քոլեջը կարիք ունի ՊԻԳԲ շրջափուլն ամբողջացնելու նաև որակի ապահովման գործընթացներում, ինչը

կնպաստի փաստաթղթային հենքի և փաստացի իրականացվող գործընթացների կապակցմանը, ինչպես նաև հնարավորություն կընձեռի խուսափելու գերփաստաթղթավորումից՝ հաշվի առնելով, որ որակի ապահովման համակարգի գործունեության համար ստեղծված շատ փաստաթղթերում առկա են բովանդակային կրկնություններ:

Դրական է, որ քոլեջի գործունեության վերաբերյալ առկա է տեղեկատվություն պաշտոնական կայքէջում, սակայն ՈՆԱ գործընթացների վերաբերյալ տեղեկությունը դեռևս ամբողջական չէ, ինչը թույլ կտար համակարգի արդյունավետության մասին համակողմանի տեղեկատվություն ապահովել բոլոր շահակիցների շրջանում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի որակի ապահովման ներքին համակարգի գործունեությունը դեռևս չի նպաստում քոլեջում ընթացող բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման համար կիրառվող գործիքները արդյունավետ չեն, վերհանված կարիքները հիմք չեն դառնում բարելավման հետագա գործընթացների և կառավարչական որոշումների կայացման համար, իրականացված ինքնավերլուծությունը չի ապահովում բավարար հիմքեր արտաքին գնահատման գործընթացների համար, համակարգը չի ապահովում քոլեջի գործունեության մասին տեղեկատվության թափանցիկությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԷԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

_____

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար

23-ը հունվարի, 2024 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Միերյան՝ 2000թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Ֆինանսահաշվային ֆակուլտետի, ֆինանսներ և վարկ մասնագիտությունը, 2004թ. եղել է նույն բուհի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտ: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ է: 2006–2021թ. աշխատել է ՀՊՏՀ, «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, Training on capacity building for implementing bologna reforms, «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում» և այլ թեմաներով: 2022թ.-ից աշխատում է Եվրոպական համալսարանում որպես դասախոս, ներկայումս՝ «Ֆինանսներ և բանկային գործ» ամբիոնի վարիչ:

Հասմիկ Միսիթարյան՝ 2005թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Դասական երգեցողության բաժինը: Աշխատել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմում որպես Հայ եկեղեցու պատմության և կիրակնոցյա դպրոցների ուսուցիչների տեսուչ, ապա Արմավիրի թեմում որպես «Սուրբ Նշան» կրթամշակութային կենտրոնի հիմնադիր-տնօրեն, համերգների գեղարվեստական ղեկավար: Եղել է դասական երգչուհի ԵՊԿ Ղազարոս Աղայանի անվան օպերային ստուդիայում: 2010թ.-ից աշխատում է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական քոլեջում որպես երգեցողության և անսամբլի դասախոս, 2021-ից քոլեջի կրթության որակի պատասխանատուն է: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ կազմակերպված ՈԱԱԿ-ի, ԿԳՄՍՆ-ի, CDPF-ի, Կոլորադոյի պետական համալսարանի, ԼՂՀ մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարարության կողմից:

Մարիամ Հովհաննիսյան՝ 2014թ. ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը՝ ստանալով անգլերենի մանկավարժի բակալավրի որակավորում, իսկ 2016-ին նույն բուհի կողմից ստացել է հանրային կառավարման մասնագետի (մասնագիտացումը՝ կրթություն) մագիստրոսի որակավորում: 2015-ին որպես ուսանող-փորձագետ մասնակցել է ՀՊՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: 2016-2021թթ. աշխատել է Հայաստանի Գեղարվեստի պետական ակադեմիայում որպես որակի ապահովման մասնագետ: 2021-ից Էջմիածնի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջի որակի ապահովման կենտրոնի ղեկավարն է և անգլերենի դասախոս: 3 գիտական հոդվածների հեղինակ/համահեղինակ է:

Նարեկ Մելիքսեթյան՝ 2022թ.-ից Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի Ռեժիսուրա բաժնի ուսանող է: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված ուսանող-փորձագետների վերապատրաստմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	11.10.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Դասալսումներ	12:00	14:00	60 րոպե
2	Հաստատության ռեսուրսների դիտարկում	14:10	15:10	60 րոպե

	16.10.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	10:50	50 րոպե
2	Հանդիպում փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	12:20	13:00	40 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում Կառավարման խորհրդի հետ	14:20	15:10	50 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	15:20	16:10	50 րոպե
7	Հանդիպում գործատուների հետ	16:20	17:20	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

	17.10.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:00	11:00	60 րոպե
2	Հանդիպում դասախոսների հետ(10-12 հոգի)	11:10	12:10	60 րոպե
3	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	12:20	13:20	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե

1

5	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների և վարչական աշխատակիցների հետ (Ուսումնական մաս, կարիերայի կենտրոն, կադրերի պատասխանատու, հաշվապահություն, գրադարան, արխիվ, տեսադարան, ձայնադարան)	14:40	15:40	60 րոպե
6	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	15:50	16:40	50 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:30	100 րոպե

	18.10.2023 թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների հետ		10:00	11:00	60 րոպե
2	Զուգահեռ հանդիպում «Երգեցողություն» և «Երգչախմբավորություն» կրթական ծրագրերի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների)» կրթական ծրագրի դասախոսների հետ	11:15	12:15	60 րոպե
3	Զուգահեռ հանդիպում «Երգեցողություն» և «Երգչախմբավորություն» կրթական ծրագրերի ուսանողներիհետ	Զուգահեռ հանդիպում «Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների)» կրթական ծրագրի ուսանողների հետ	12:30	13:30	60 րոպե

4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
5	Բաց հանդիպում	15:00	16:00	60 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:10	18:00	110 րոպե

	19.10.2023 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում Որակի ապահովման բաժնի հետ	10:00	11:00	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն	11:10	12:50	100 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Համերգային ծրագրի դիտարկում	14:10	15:00	50 րոպե
5	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:10	16:10	60 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	17:20	60 րոպե
7	Հանդիպում ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
1	Քոլեջի տարեկան աշխատանքային պլաններ	2
2	Քոլեջի աշխատակիցների պաշտոնների նկարագրեր	2
3	Ստորաբաժանումների տարեկան պլաններ՝ վերջին երեք տարիների համար	2
4	Ստորաբաժանումների հաշվետվություններ՝ վերջին երեք տարիների համար	2
5	Տնօրինական, մանկավարժական խորհուրդների և ամբիոնների նիստերի արձանագրություններ	2
6	Մասնագիտական դասարաններ փոխելու դիմումների օրինակներ և դրանց հիման վրա ընդունված որոշումներ	3
7	Դասալսումների մատյաններ /ամբիոններից՝ մեկական/	3
8	Դասալսումների վերլուծություն	3
9	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսների պլաններ	3
10	Պրակտիկայի վայրերի հետ կնքվող պայմանագրեր	3
11	Ուսումնառության նյութեր, ուսանողների թղթապանակներ	3
12	Ընտրված երեք կրթական ծրագրերից զատ մնացյալ մասնագիտությունների համար ՈՒԱ-ներ և դրանց դասավանդման և ուսումնառության մեթոդներ	3
13	Փորձնական նպատակով ներդրված ՊԿՉ-ների կառուցվածքային և բովանդակային խնդիրների վերաբերյալ առկա հաշվետվություններ	3
14	2023-2024 ուստարվա ընդունելության թվային տվյալներ՝ ըստ մասնագիտությունների Մասնագիտությունների լիցենզիոն տեղեր	4
15	Քոլեջի ներքին կարգապահական կանոններ	4
16	ՈՒԽ պլաններ և նիստերի արձանագրություններ	4
17	Երաժշտական ստեղծագործությունների վերլուծություններ, ռեֆերատներ, ուսանողների կողմից իրականացված վերլուծական աշխատանքներ	4
18	Ուսանողների հեռացման հիմքեր	4
19	5 տարվա շրջանավարտների ընդհանուր թիվը	4

	Մինչև ավարտելը աշխատանքի անցած ուսանողների աշխատանքային ոլորտը /մասնագիտությամբ, ոչ մասնագիտությամբ/	
20	Դասախոսների պորտֆոլիոներ	5
21	Ամբիոնների հաստիքացուցակ՝ աշխատավարձերով	5
22	Դասախոսական կազմի ընտրության իրականացված մրցույթների արձանագրություններ	5
23	Դասախոսների ընդհանուր թվաքանակ Համատեղությամ աշխատող դասախոսների թվաքանակ Պրակտիկ ոլորտի դասավանդողների թվաքանակ	5
24	Ինքնագնահատման թերթեր	5
25	Այլ հաստատությունների կողմից կազմակերպված վերապատրաստումների մասնակցության ցանկ	5
26	Քոլեջում աշխատող շրջանավարտների ցանկ	5
27	Ուսանողի կոգնիտիվ ունակությունների գնահատման չափանիշներ,ռուբրիկներ	6
28	Դասախոսական կազմի հետազոտությունների օրինակներ, ձեռնարկներ, ուղեցույցներ	6
29	ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվ /Եկամուտների և ծախսերի նախահաշիվ/՝ 2019-2022թթ. կտրվածքով 2023թ. Կառավարման խորհրդում հաստված եկամուտների և ծախսերի նախահաշիվ	7
30	Կազմակերպական գործող կառուցվածք	7
31	Տեղական և միջազգային համագործակցային գործող պայմանագրեր, հուշագրեր	9
32	Պրակտիկաների բազաների ցանկ	9
33	Որակի ապահովման ստորաբաժանման կողմից իրականացվող հարցումների նմուշներ և լրացված հարցաթերթեր	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. դահլիճներ,
3. մասնագիտական կաբինետներ,
4. համակարգչային լսարան,
5. ստորաբաժանումներ,
6. մարզադահլիճ,
7. բուժկետ,
8. գրադարան,
9. ձայնադարան,
10. տեսադարան,
11. ապաստարան։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՍ նախարարություն - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ